Co-funded by the European Union

KONRAD ADENAUER STIFTUNG

YIC YOUTH INITIATIVE CENTRE

World Vision ARMENIA

MEDIA INITIATIVES CENTER

ngo center

ՄՈԴԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

կրթական խաղի ձեռնարկ

YOUth in Action

ՄՈԴԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

կրթական խաղի ձեռնարկ

Հեղինակներ՝

Արեգ Թադևոսյան
Զարուհի Լավչյան
Սուրեն Մխիթարյան
Վահե Սալահյան
Քրիստինե Հովսեփյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **1-2**

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ **4-15**

Իրավիճակի նկարագրություն, հանրաքվեի դրվող հարց, փաստարկներ և հիմնավորումներ, դերերի նկարագրություն, հանձնարարություններ, ամփոփիչ հարցեր, նյութեր թեմայի վերաբերյալ։

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ **16-28**

Իրավիճակի նկարագրություն, հանրաքվեի դրվող հարց, փաստարկներ և հիմնավորումներ, դերերի նկարագրություն, հանձնարարություններ, ամփոփիչ հարցեր, նյութեր թեմայի վերաբերյալ։

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ **29-38**

Իրավիճակի նկարագրություն, հանրաքվեի դրվող հարց, փաստարկներ և հիմնավորումներ, դերերի նկարագրություն, հանձնարարություններ, ամփոփիչ հարցեր, նյութեր թեմայի վերաբերյալ։

ԿՐԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ **39-54**

Օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, քաղաքացիական հասարակություն և մեդիա։

ԽԱՂԱՎԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ **55-65**

Ունակությունները և կերպարը, նախապատրաստական աշխատանքը, խաղի ընթացքը, ձևաթերթիկներ։

Introduction

“Model Armenia” is an educational simulation game designed to enhance young people’s understanding of the Republic of Armenia’s public administration system, leadership abilities, sense of civic responsibility, and critical thinking. The simulation game allows participants to assume roles with clear goals, providing insights into the roles and functions of various actors within the Armenian public administration system, encouraging a sense of commitment.

The “Model Armenia” educational simulation game-manual targets experienced organizations and individual trainers conducting educational projects using informal learning principles and methodology. It contains thematic material and assumes that trainers possess the necessary skills to facilitate the game effectively.

The “Model Armenia” educational game-manual is developed based on the methodology of “Model United Nations,” tailored and localized for the Armenian context, enabling up to 5-6 hours of gameplay in a full-day session.

The manual comprises three distinct games, educational resources for role-playing participants, and facilitator guidelines. Each game description follows a consistent format, starting with an overview and progressing to detailed player assignments.

The manual is structured into three main sections:

- Three educational simulation games titled “Model Armenia.”
- Educational resources detailing the roles of the five game characters.
- Comprehensive instructions and recommendations for organizing and executing the “Model Armenia” game for facilitators.

“Model Armenia” educational game was created by the expert team of “NGO Center” civil society development NGO within the framework of “Youth in Action. Youth Empowerment and Leadership Development in Armenia” Project.

Project is a co-funded initiative by the European Union and the Konrad Adenauer Foundation (KAS) implemented together with the World Vision Armenia (WVA), Media Initiatives Center (MIC), and Gyumri “Youth Initiatives Centre” (YIC).

The content of Model Armenia is solely the responsibility of the authors and does not necessarily reflect the views of the European Union and the Project implementing organizations.

Ներածություն

«Մոդել Հայաստան»-ը կրթական սիմուլյացիոն խաղ է, որի նպատակն է զարգացնել երիտասրդների ՀՀ հանրային կառավարման համակարգի իմացությունը, առաջնորդության կարողությունները, քաղաքացիական պատասխանատվության զգացումը և քննադատական մտածողությունը:

Սիմուլյացիոն խաղը հնարավորություն է ընձեռնում խաղի մասնակիցներին դերերի և հստակ նպատակների ստանձնման միջոցով պատկերացում կազմելու իրականում տվյալ դերակատարի նշանակության և գործառույթների վերաբերյալ՝ ստանձնելով տվյալ դերակատարի հանձնառությունը:

«Մոդել Հայաստան» կրթական սիմուլյացիոն խաղ-ձեռնարկը նախատեսված է ոչ ֆորմալ ուսուցման սկզբունքներով ու մեթոդաբանությամբ կրթական նախագծեր իրականացնող փորձառու կազմակերպությունների և անհատ ուսուցանողների օգտագործման համար: Այստեղ զետեղված են թեմատիկ նյութեր, և ակնկալվում է, որ մասնակիցներին դրանք փոխանցելու համար անհրաժեշտ ուսուցանողի հիմնական ունակություններն արդեն իսկ առկա են:

«Մոդել Հայաստան» կրթական խաղ-ձեռնարկը մշակված է «ՄԱԿ մոդել» մեթոդաբանության հիմքի վրա՝ տեղայնացնելով և ադապտացնելով Հայաստանյան միջավայրին, ինչը հնարավորություն է տալիս այն օգտագործելու մեկ ամբողջական օր մինչև 5-6 ժամ տևողությամբ խաղ անցկացնելու համար:

«Մոդել Հայաստան» ձեռնարկը ներառում է երեք առանձին խաղեր, դերակատարների վերաբերյալ կրթական նյութեր և ցուցումներ վարողների համար: Խաղերի նկարագրերը միատարր են՝ գրված նույն տրամաբանությամբ և ձևաչափով: Խաղերի ընդհանուր նկարագրերին հաջորդում են դերակատարների հանձնարարությունները և մանրամասն նկարագրությունները:

Ձեռնարկը բաղկացած է երեք հիմնական բաժիններից՝

- «Մոդել Հայաստան» երեք կրթական սիմուլյացիոն խաղեր
- Ուսուցողական նյութեր խաղի 5 դերակատարների վերաբերյալ
- «Մոդել Հայաստան» խաղի կազմակերպման և իրականացման ցուցումներ և ուղեցույց խաղը վարողների համար:

«Մոդել Հայաստան» կրթական սիմուլյացիոն խաղը ստեղծվել է «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ–ի կողմից «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

«Մոդել Հայաստանի» բովանդակությունը կազմվել է բացառապես հեղինակների պատասխանատվությամբ և կարող է չարտացոլել Եվրոպական միության և ծրագիրն իրականացնող կազմակերպությունների տեսակետները:

Հապավումների ցանկ

ԱԱԾ- Ազգային անվտանգության ծառայություն

ԱԺ- Ազգային Ժողով

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն

ՀԿ- Հասարակական կազմակերպություն

ՄԱԿ- Միավորված Ազգերի Կազմակերպություն

ԿԳՄՍՆ- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՊԵԿ-Պետական եկամուտների կոմիտե

ՔՀԿ- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՍԴ - Սահմանադրական դատարան

ՁԼՄ- Ձանգվածային լրատվական միջոց

ՇՄՆ- Շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄԱԳ- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՕՈՒՆ- Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

ԽՍՀՄ- Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

«Մոդել Հայաստան» ակմուլյացիոն խաղի բառացանկը հասանելի է այս հղումով:

Scan me!

ԽԱՂ 1

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի նկարագրություն

ՀՀ ընտրական իրավունք ունեցող 300 հազար քաղաքացի «Հայաստանի երիտասարդական ցանց» հովանոցային հարթակի հրավերով դիմել են Ազգային ժողով՝ Հայաստանի Հանրապետության 16-17 տարեկան քաղաքացիներին Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունք տալու պահանջով: Մինչ այժմ նման իրավունք ունեին ՀՀ 18 տարեկանը լրացած քաղաքացիները, սակայն նախաձեռնությունը մի շարք գիտական խմբերի աջակցությամբ հիմնավորում է, որ վերջին տասնամյակներում տեղի ունեցող հասարակական և հոգեբանական փոփոխությունների հետևանքով երիտասարդներն ավելի շուտ են հասունանում, և պետք է տարիքային շեմն իջեցնել մինչև 16 տարեկանը:

Սահմանադրության փոփոխությունն առաջարկող քաղաքացիական նախաձեռնությունը բերում է այլ երկրների փորձից օրինակներ, որտեղ ընտրական տարիքն ավելի ցածր է: Նախաձեռնության անդամները պնդում են, որ հանրաքվեներին և Ազգային ժողովի ընտրություններին ավելի ցածր տարիքում մասնակցելու իրավունքը կբարձրացնի երիտասարդների քաղաքացիական պատասխանատվությունը և կնպաստի ընտրություններին ընտրողների ավելի ակտիվ մասնակցությանը: Հակառակ դիրքորոշում ունեցողները պնդում են, որ 16 տարեկան երիտասարդները դեռ բավարար հասուն չեն նման պատասխանատու գործընթացին մասնակցելու համար:

Ուսումնասիրությունները և դիտարկումները մի քանի երկրում, որտեղ տարբեր մակարդակի ընտրությունների համար ընտրելու տարիքը իջեցվել է մինչև 16 տարեկան, վկայում են այն մասին, որ մասնակցության մակարդակը հաճախ իրականում ավելի բարձր է, քան այլ տարիքային խմբերում:

Օրինակ՝ Շոտլանդիայում, որտեղ 16 և 17 տարեկան երիտասարդներն իրավունք ստացան քվեարկելու 2014 թվականի անկախության հանրաքվեին և դրան հաջորդած Շոտլանդիայի խորհրդարանի ընտրություններում, այս տարիքային խմբում ընտրողների համեմատաբար բարձր մասնակցության մասին հաղորդումներ են եղել: Շոտլանդիայի հանրաքվեի հանձնաժողովի տվյալների համաձայն՝ անկախության հանրաքվեին 16 և 17 տարեկան երիտասարդների մասնակցությունը կազմել է շուրջ 75%, որն ավելի բարձր է, քան ընդհանուր մասնակցությունը:

Նախաձեռնության արդյունքում Ազգային ժողովի պատգամավորների երեք հինգերորդն առաջարկել է կատարել սահմանադրական փոփոխություն և դրա համար հարցը դնել հանրաքվեի: Այժմ Ազգային ժողովում անցկացվում են վերջին լսումները հանրաքվեից առաջ, իսկ Կառավարությունը քննում է այլ օրենքներում այս փոփոխության ընդունման արդյունքում առաջանալիք հետևանքները: Քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների կարծիքներն այս հարցում բաժանված են:

Հանրաքվեին դրվող հարցը

Սահմանադրության Հոդված 48-ի առաջին կետում կատարել փոփոխություն և այն վերաձևակերպել հետևյալ կերպ.

«Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը Հայաստանի Հանրապետության՝ տասնվեց տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք»

Փաստարկներ և հիմնավորումներ

Քվեարկության տարիքը նվազեցնելուն կողմ փաստարկներ

1. Քաղաքական ներգրավվածության բարձրացում: Քվեարկելու տարիքի իջեցումը կարող է խրախուսել ավելի երիտասարդ տարիքից քվեարկելու սովորությունը՝ խթանելով երիտասարդների քաղաքական ներգրավվածությունը և ակտիվ քաղաքացիությունը: Ժողովրդավարական գործընթացներին վաղաժամ ներգրավումը կարող է հանգեցնել առավել հասուն տարիքում ավելի ակտիվ մասնակցության: Երիտասարդներն արդեն ներգրավված են քաղաքական մի շարք գլոբալ, նաև տեղական խնդիրների շուրջ քննարկումներում ու արշավներում, ցույցերում արտահայտում են իրենց մոտեցումները, և հստակ է իրենց կյանքին վերաբերող տարբեր ոլորտներում նրանց ներգրավման պատրաստակամությունը:

2. Երիտասարդների շահերի ներկայացում: Երիտասարդների վրա ուղղակիորեն ազդում են բազմաթիվ քաղաքական որոշումներ՝ կրթությունից մինչև կլիմայի փոփոխություն: Քվեարկության տարիքի իջեցումը երաշխավորում է, որ նրանց ձայնը լսելի կլինի, և նրանց շահերը կներկայացվեն քաղաքական գործընթացներում, ինչը կարող է հանգեցնել այնպիսի քաղաքականության, որն ավելի լավ կարտացոլի երիտասարդ բնակչության կարիքները: Քվեարկության տարիքի իջեցումը դիտվում է նաև որպես քայլ դեպի ավելի մեծ ներառականություն՝ ապահովելով, որ հասարակության բոլոր շերտերն իրենց խոսքն ունենան ժողովրդավարական գործընթացում:

3. Հասունություն և քաղաքացիական ունակություններ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մինչև 16 տարեկան երիտասարդները տիրապետում են ճանաչողական հմտություններին, որոնք անհրաժեշտ են քվեարկության վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Նրանք կարող են քննադատորեն գնահատել տեղեկատվությունը և հասկանալ բարդ սոցիալական խնդիրները՝ վիճարկելով այն գաղափարը, որ նրանք ավելի քիչ ընդունակ են քվեարկության հիմնավորված ընտրություն կատարելու, քան տարիքով մեծ ընտրողները:

4. Հաջողություն այլ ժողովրդավարական երկրներում: Որոշ երկրներում, որոնք իջեցրել են քվեարկության տարիքը մինչև 16 տարեկան, օրինակ՝ Շոտլանդիայում, որոշակի ընտրություններում դրական արդյունքներ են գրանցվել, այդ թվում՝ երիտասարդ ընտրողների ներգրավվածության ավելի բարձր ցուցանիշներ, քան որոշ՝ ավելի մեծ տարիքի ընտրողների դեպքում:

Քվեարկության տարիքը նվազեցնելուն դեմ փաստարկներ

Թեև քվեարկության տարիքը նվազեցնելու համոզիչ փաստարկներ կան, ընդդիմախոսները մտահոգություններ են հայտնում երիտասարդների փորձի պակասի, ազդեցության նկատմամբ հակվածության և ոչ հետևողական քաղաքական ներգրավվածության հնարավորության վերաբերյալ: Նրանք պնդում են, որ հասունությունը, կյանքի փորձը և տնտեսական անկախության որոշակի մակարդակը շատ կարևոր են քվեարկության վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Մասնավորապես՝

1. Հասունություն: Քննադատները պնդում են, որ 16 տարեկանները կարող են չունենալ անհրաժեշտ հասունությունը՝ գիտակցված և տեղեկացված քաղաքական որոշումներ

կայացնելու համար: Այս տարիքում անհատները դեռ զարգանում են հուզական, սոցիալական և ինտելեկտուալ առումով, ինչը կարող է ազդել բարդ քաղաքական խնդիրները համարժեք հասկանալու նրանց ունակության վրա: Շատերը կարծում են, որ 16-ամյա երիտասարդները չունեն բավարար կենսափորձ՝ հասկանալու իրենց ընտրության երկարաժամկետ հետևանքները: Նրանք, հնարավոր է, չեն բախվել բավարար իրական իրավիճակների հետ կամ հնարավորություն չեն ունեցել սոցիալական խնդիրների համապարփակ պատկերացում ձևավորել:

2. Կրթություն և գիտելիք: Քննադատները պնդում են, որ կրթական համակարգն այս պահին կարող է պատշաճ կերպով չպատրաստել 16 տարեկաններին քաղաքացիական և ժողովրդավարական քաղաքական գործընթացներում ներգրավման համար: Քաղաքական գործընթացների, կառավարական կառույցների և քաղաքական խնդիրների վերաբերյալ նրանց ըմբռնման մեջ կարող են գիտելիքների լուրջ բացեր լինել, ինչը հանգեցնում է քվեարկության ժամանակ սխալ ընտրության:

3. Քաղաքական հայացքների կայունություն և արտաքին գործոնների ազդեցություն: Հայացքներն ու գաղափարախոսությունները զարգանում են դեռևս դեռահասության շրջանում: 16-ամյա երիտասարդներին քվեարկելու հնարավորություն տալը կարող է հանգեցնել նրան, որ դեռևս չձևավորված հայացքների ներքո կկատարվի սխալ ընտրություն: Մտահոգություններ կան կապված ընտանիքի, ծնողների, հասակակիցների ճնշման, ընտանիքի ազդեցության կամ արտաքին մանիպուլյացիաների նկատմամբ երիտասարդ ընտրողների զգայունության հետ: 16-ամյա երիտասարդները կարող են ավելի հեշտությամբ ենթարկվել ընկերների, ընտանիքի կամ լրատվամիջոցների ազդեցությանը՝ առանց անկախ քաղաքական կարծիքներ ձևավորելու:

4. Ցածր մասնակցություն: Քննադատներն անհանգստանում են, որ քվեարկության տարիքի իջեցումը կարող է հանգեցնել ընտրողների ընդհանուր մասնակցության նվազմանը: Ավելի երիտասարդ ընտրողները կարող են ընտրություններին մասնակցելու ավելի ցածր մոտիվացիա ունենալ ավելի մեծ տարիքային խմբերի համեմատ, ինչը հանգեցնում է բնակչության շահերի շեղված ներկայացման:

Դերերի նկարագրություն

Ազգային ժողով

- Ազգային ժողով–1. Դուք Ազգային ժողովի իշխանական բլոկի պատգամավոր եք, և Ձեր խմբակցությունը որոշել է, որ չի խոչընդոտելու Սահմանադրական փոփոխությանը հանրաքվեին, սակայն Ազգային ժողովում չի հաստատել այս սահմանադրական փոփոխությունը՝ ընդդիմադիր խմբակցությունների շահարկումներից խուսափելու համար: - 2 հոգի
- Ազգային ժողով–2. Դուք Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչ եք և դեմ եք այս սահմանադրական փոփոխությանը, քանի որ կարծում եք, որ առավել ցածր տարիքի երիտասարդները ավելի հակված են ենթարկվելու մանիպուլյացիայի, հատկապես մեդիադաշտում, իսկ հիմնական լրատվամիջոցները իշխանական խմբակցության ազդեցության տակ են: Դուք, այնուամենայնիվ, դեմ չեք արտահայտվել հանրաքվեին, որպեսզի չկորցնեք երիտասարդ ընտրողների քվեները, որոնք «Հայաստանի երիտասարդների ցանց» հարթակի հիմնական ձայն տվողներն էին: -2 հոգի
- Ազգային ժողով–3. Դուք Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն եք, որը պատասխանատու է այս թեմայով Ազգային ժողովում Կառավարության, Սահմանադրական դատարանի, զանգվածային լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության կառույցների ներկայությամբ հանրային լսումների կազմակերպման համար: Դուք պետք է հետևեք, որ լսումներն

ընթանան սահուն և առանց անախորժ միջադեպերի: -1 հոգի

Կառավարություն

- Կառավարություն–1. Դուք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչն եք, որը կողմ է երիտասարդների համար քվեարկության տարիքի իջեցմանը, քանի որ ձեր ռազմավարական փաստաթղթերում թիրախ խումբը հենց 16-30 տարեկան ՀՀ քաղաքացիներն են, և դուք կարծում եք, որ այս փոփոխությունը կնպաստի երիտասարդների քաղաքական և քաղաքացիական մասնակցության բարձրացմանը: -2 հոգի
- Կառավարություն–2. Դուք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչն եք, որը դեմ է այս փոփոխությանը: Ձեր կառույցը հետազոտություն է անցկացրել այս հարցերով, և արդյունքները ձեզ թույլ են տալիս մտածել, որ այս փոփոխությունները կբերեն բացասական հետևանքների: Դուք չեք ուզում շատ խիստ դեմ արտահայտվել, քանի որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կողմ է այս փոփոխությանը, իսկ իշխանական խմբակցությունը դեմ չի արտահայտվել, բայց ընդհանուր առմամբ փորձում եք այնպես անել, որ փոփոխությունը չընդունվի: -1 հոգի

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–1. Դուք «Հայաստանի երիտասարդական ցանցի» նախագահության անդամ եք: Ձեր կառույցը միավորում է 30 երիտասարդական կազմակերպություն, 6 ուսանողական խորհուրդ, և դուք ՀՀ երիտասարդական և ուսանողական կառույցների ամենամեծ հովանոց կազմակերպությունն եք: Մեծ աջակցություն եք ցուցաբերել «Երիտասարդի ձայն» քաղաքացիական նախաձեռնության աշխատանքներին և ձեր բոլոր կապերը նախարարությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ օգտագործում եք այս հանրաքվեի դրական արդյունքն ստանալու համար: Համարում եք, որ ընտրողի տարիքը միանշանակ պետք է իջեցվի, դա միայն դրականորեն կանդրադառնա երիտասարդական քաղաքականությունը և ռազմավարությունը ուժեղացնելու և երիտասարդների համար նաև առավել թիրախավորված աշխատելու համար: -2 հոգի
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–2. Դուք «Իմաստունների խորհուրդ» փորձագիտական հասարակական կազմակերպության վարչության անդամ եք: Ձեր կառույցը միավորում է բազմաթիվ անվանի գիտնականների, այդ թվում՝ ակադեմիկոսների: Ձեր կառույցը խիստ դեմ է այս նախաձեռնությանը, քանի որ համարում է, որ այդ տարիքի մարդիկ չեն կարող լիարժեք կերպով մասնակցել քաղաքական գործընթացներին, քանի որ բավարար հասունացած չեն, ինչպես նաև տնտեսապես կախված են իրենց ծնողներից և չեն կարող ինքնուրույն որոշում կայացնել: - 2 հոգի
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–3. Դուք համընդհանուր քաղաքացիական կրթության ջատագով կառույց եք, որը միավորում է ուսուցիչների, որոնք առաջ են տանում այն գաղափարը, որ որակյալ, հիմնավոր, լավ կառուցված, դպրոցական քաղաքացիական կրթությունը միայն կարող է բերել լավ քաղաքացիների դաստիարակմանը, և համարում եք, որ դպրոցում ՔԿ ուժեղացված ուսուցումը թույլ կտա այդ տարիքի անձանց գիտակից որոշումներ կատարել: Ուստի ջատագովում եք, որ, նման փոփոխությանը զուգահեռ, պետք է արվեն կրթական ծրագրերի վերանայումներ՝ այդ բաղադրիչն ուժեղացնելու համար: Այս փոփոխությունը դուք տեսնում եք որպես լավ միջոց՝ ձեր ռազմավարությունների համար քաղաքացիական կրթության ոլորտն

ուժեղացնելու: Դուք տվյալներ ունեք, որ նման փոփոխությունը դրականորեն կազդի երիտասարդների հասարակական ներգրավվածության և հայրենասիրության զգացման մեծացման վրա:

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–4. Դուք «Հետազոտողների հայկական ասոցիացիա» հետազոտություններ իրականացնող հասարակական կառույցի ներկայացուցիչ եք, որը մի շարք ուսումնասիրություններ է կատարել թեմայի վերաբերյալ, ունի և՛ կողմ, և՛ դեմ մի շարք փաստարկներ, սակայն պաշտպանում է նախագիծը՝ հիմնավորելով, որ ըստ երիտասարդների շրջանում արված հարցումների՝ նրանց մեծ մասը հետաքրքրված է այս փոփոխությամբ. վերջին հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որ 16 և 18 տարեկանների միջև ճանաչողական ունակությունների և հոգեբանական հասունության տարբերություններ գրեթե չկան:

Դատական մարմիններ

- Դատական մարմիններ–1. Դուք Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչությունից եք, որը ներգրավված է եղել առաջարկվող փոփոխության սահմանադրականության մասին եզրակացության մշակման մեջ և չնայած որ հակասություններ չեք տեսնում Սահմանադրության այլ կետերի, ստորագրված միջազգային կոնվենցիաների հետ, պատկերացնում եք այդ փոփոխությունից բխող մի շարք այլ փոփոխությունների կարիքը, և չեք համարում, որ հիմա ճիշտ ժամանակն է նման փոփոխությունների: Դուք նման փոփոխությունները տեսնում եք, որպես ընտրական առավել հիմնավոր և մեծ բարեփոխումների համատեքստում արվելիք փոփոխություն: - 2 հոգի

- Դատական մարմիններ–2. Դուք Սահմանադրական դատարանի դատավոր եք, որը Դատարանի հետ համատեղ քննել և իր դրական եզրակացությունն է տվել այս փոփոխության՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու մասին: Դուք ծանոթ եք փոփոխության շուրջ տարբեր մոտեցումների, գիտեք Կառավարության դիրքորոշումները, բայց, ինչպես և կարգն է, առաջնորդվել եք միայն առկա Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով:

Զանգվածային լրատվամիջոցներ

- Զանգվածային լրատվամիջոց–1. Դուք միջազգային «Աշխարհ NEWS» լրատվամիջոցի հայաստանյան ներկայացուցիչն եք: Դուք ընդհանուր առմամբ արժևորում եք այս սահմանադրական փոփոխությունը և պատրաստվում եք օբյեկտիվորեն լուսաբանել բոլոր կարծիքները: - 2 հոգի

- Զանգվածային լրատվամիջոց–2. Դուք «Դեմերի Դեմ» խիստ ընդդիմադիր լրատվամիջոցի ներկայացուցիչն եք և մտադիր եք բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել այս հանրաքվեի հետ կապված մեծ աղմուկ բարձրացնելու և իշխանական խմբակցության վարկանիշի նվազմանը նպաստելու համար: - 2 հոգի

- Զանգվածային լրատվամիջոց–3. Դուք «Ազգային ԹիՎԻ» հանրային լրատվամիջոցի ներկայացուցիչն եք: Ձեզ համար առաջնային է բոլոր քննարկվող հարցերի շուրջ ներկայացնել Կառավարության պաշտոնական մոտեցումներն ու կարծիքները՝ հիմնավորումներ, տվյալներ, մեջբերումներ՝ օրինակներ գտնելով հենց այդ մոտեցումների պաշտպանության համար:

Խաղի ընթացքում իրականացվող հանձնարարություններ

Դերը	Հանձնարարությունը	Արդյունքը	Տրամադրումը
Կառավարություն-1	Դուք պետք է ուսումնասիրեք, թե ինչ կողմ փաստարկներ կան նման փոփոխություններ կատարող երկրներում: Պետք է պատրաստեք կողմ փաստարկների ցանկ և դրանց մասին փոքրիկ ելույթ (2 րոպե տևողությամբ) Ազգային ժողովում լսումների համար: Ելույթում պետք է հստակ երևա ձեր նախարարության դիրքորոշումը, դրա հիմնավորումները և սահմանադրական փոփոխության դրական ազդեցությունը ՀՀ երիտասարդության վրա: Ընտրեք, թե ով է անելու ելույթը և լավ պատրաստվեք դրան: Եթե ձեզ դիմեն զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները, անպայման համագործակցեք նրանց հետ: Այլ շահառուների Ձեզ դիմումների պարագայում կողմնորոշվեք ըստ հնարավորության և ժամանակի առկայության:	Փաստարկների մինչև 1-էջանոց ցանկ	Տրամադրում զանգվածային լրատվամիջոցներին Հանդիպում եք ՀՀ Ազգային ժողովի իշխանական պատգամավորին:
Կառավարություն-2	Դուք պետք է ուսումնասիրեք, թե ինչ հետազոտական բազա կա, որը կասկածի տակ է դնում նման փոփոխությունների իրականացումը, քանի որ գիտեք, որ կան երկրներ, որտեղ այդ փոփոխությունը ոչ մի կերպ չի ազդել մասնակցության աստիճանի վրա: Պետք է պատրաստեք տվյալներն ամփոփող մեկէջանոց ինֆոգրաֆիկա կամ կարճ տեղեկատվական թերթիկ և ներկայացնեք այն այլ նախարարությունների ձեր գործընկերներին: Ընտրեք, թե ինչ տեղեկատվություն եք ներառելու և ինչ շեշտադրումներ եք անելու դրան: Եթե ձեզ դիմեն զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները կամ ՀԿ անդամները, անպայման համագործակցեք նրանց հետ:	Ինֆոգրաֆիկա կամ տեղեկատվական թերթիկ	Հանդիպում այլ նախարարությունների, ՀԿ անդամների հետ
Դատական մարմիններ-1	Դուք պետք է առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ հանդիպում անցկացնեք ԿԳՄՍ նախարարության հետ՝ հասկանալու նման նախաձեռնության հիմնավորումները, և հանդիպման արդյունքում դատավորների համար պատրաստեք տեղեկատվական թերթիկ:	Մինչև 1-էջանոց տեղեկատվական թերթիկ	Տեղեկատվական թերթիկի տրամադրում Սահմանադրական դատարանի դատավորին
Դատական մարմիններ-2	Դուք պետք է առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի եզրակացությունը ներկայացնեք հանրությանը և անաչառ կերպով բացատրեք հիմնավորումները:	Հիմնական եզրակացություններով կարճ զեկույց	Զանգվածային լրատվամիջոցին հարցազրույց

Ազգային ժողով-1	Դուք պետք է մշակեք ձեր տեսակետը պաշտպանող փաստարկների ցանկ, կապ հաստատեք պետական լրատվամիջոցի հետ և իրենց միջոցով ներկայացնեք ձեր մոտեցումները հանրությանը: Ձեզ համար կարևոր է, որ հանրությունը դրական վերաբերմունք ու մոտեցում ունենա այդ հարցին, ուստի փաստարկների հիմնավորումը նաև նկարագրում է այլ երկրների դրական փորձը:	Փաստարկների ցանկ Լրատվամիջոցի պատրաստած նյութ	Զանգվածային լրատվամիջոցի նյութը տրամադրվում է բոլոր մասնակիցներին
Ազգային ժողով-2	Դուք դեմ եք Կառավարության ցանկացած նախաձեռնությանը, ուստի պետք է հավաքեք դեմ փաստարկներ, հետազոտական տվյալներ, որոնք ներկայացնում են այս փոփոխության բացասական հետևանքները, սակայն ձեզ համար կարևոր է չկորցնել երիտասարդ ընտրողների ձայները, ուստի հանդիպում եք նախատեսել «Երիտասարդների ձայն» նախաձեռնության անդամների հետ՝ քննարկելու թեման:	Փաստարկների ցանկ	Փաստարկների ներկայացում հանդիպման ժամանակ
Ազգային ժողով-3	Դուք պետք է Ազգային ժողովի իշխանական և ընդդիմադիր թևի ներկայացուցիչների հետ խորհրդակցական հանդիպում հրավիրեք և քննարկեք՝ ինչպես է պետք կազմակերպել այս հարցով հանրային լսումը՝ այն առավելագույնս մասնակցային դարձնելու համար:	Հանրային լսումների իրականացման հիմնական մոտեցումների, գործընթացի և մասնակից խմբերի ցանկ	Տեղեկատվության տրամադրում բոլոր շահագրգիռ կողմերին, որոնք հրավիրվելու են հանրային լսման
Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-1	Դուք պետք է մշակեք ձեր կառույցի անդամ կազմակերպությունների համատեղ հայտարարություն: Այն պետք է ներառի իրավիճակի նկարագրություն, առկա բացեր, առաջարկվող լուծման հիմնավորում և փաստեր, օրինակներ, հակադիր կարծիքների հակափաստարկներ: Հայտարարությունը պետք է ներկայացվի զանգվածային լրատվամիջոցին և Ազգային ժողովի պետահիրավական հանձնաժողովին:	Մինչև 1-էջանոց հայտարարության տեքստ	Հայտարարության ներկայացում Ազգային ժողովում հանրային լսմանը Հարցազրույց զանգվածային լրատվամիջոցում
Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-2	Ձեր կառույցը պետք է տվյալներ, փաստեր, օրինակներ, թվեր հավաքի, որոնք ապացուցում են, որ այս նախաձեռնությունը սխալ է, որ այդ փոփոխությունը չպետք է արվի, քանի որ երիտասարդները պատրաստ չեն նման բարդ գործունեության: Դուք պետք է հոդված պատրաստեք, որում ներառեք բոլոր փաստերը: Այդ հոդվածը պետք է հրապարակեք զանգվածային լրատվամիջոցներից մեկում և ներկայացնեք ձեր տվյալները Կառավարության հետ կազմակերպված հանդիպմանը:	Հոդված ԿԳՄՍ նախարարու-թյան ներկայացուցիչների հետ հանդիպման ապացույց	Հոդվածի հրապարակում Հանդիպում ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների հետ

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–3	Դուք պետք է ուսումնասիրեք կրթության և բարձր մասնակցության կապը հաստատող օրինակներ, հետազոտական նյութեր, առկա փորձը և մամլո ասուլիսի ժամանակ ներկայացնեք ձեր դիրքորոշումներն այն մասին, որ նման փոփոխությունը հնարավոր կլինի միայն ուժեղ կրթական բարեփոխումների հետ համատեղ, և հայտնեք ձեր պատրաստակամությունը՝ համակողմանի կրթական ծրագիր մշակել նախարարության հետ: Ձեզ հարկավոր է զանգվածային լրատվամիջոցների լավ լուսաբանում:	Փաստարկների ցանկ Մամուլի հաղորդագրություն	Մամլո ասուլիսի հրավիրում
Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–4	Դուք պետք է ակցիա պլանավորեք և իրականացնեք, որն ամբողջովին պաշտպանում է սահմանադրական փոփոխությունը: Ակցիայի համար պետք է պատրաստեք վիզուալ նյութեր, պաստառներ, գրեք կոչեր: Դուք շեշտը դնում եք այն բանի վրա, որ սա կօգնի հաղթահարել քաղաքական լճացումները, երիտասարդներին կհանի քաղաքական ապատիայից, լսելի կդարձնի նաև նրանց ձայնը, կսովորեցնի առավել ժողովրդավարական լինել իրենց ընտրության մեջ: Ազգային ժողովում լսումների ժամանակ ակցիայի իրականացումը շատ կարևոր է:	Փաստարկների ցանկ Ակցիայի վիզուալ նյութեր	Ակցիայի իրականացում Ազգային ժողովում հանրային լսման ժամանակ
Զանգվածային լրատվամիջոց–1	Դուք պետք է ուսումնասիրեք, թե ինչ հետաքրքիր տեղեկություններ և հրապարակումներ կան այս թեմայով միջազգային և արտասահմանյան լրատվամիջոցներում և պատրաստեք ընդհանրացված մի փոքր հոդված՝ նշելով աղբյուրները: Ազգային ժողովի ընդդիմադիր և իշխանական խմբակցությունների և ՀՀ կառավարության ներկայացուցիչների մասնակցությամբ պետք է տեսանկարահանեք 10 րոպե տևողությամբ բանավեճ և այն տեղադրեք հանդիպման սոցիարթակում	Փաստարկների ցանկ Բանավեճի տեսագրություն	Տեսագրության տարածում ընդհանուր խմբում
Զանգվածային լրատվամիջոց–2	Դուք ամեն գնով ուզում եք տապալել կառավարության ցանկացած նախաձեռնություն, ուստի պետք է սոցիալական հարթակներում արվող տարբեր հրապարակումների տեքստեր պատրաստեք, որոնք մեծ ինտենսիվությամբ պետք է ներկայացնեք ներգրավված բոլոր կողմերին: Դուք պետք է հինգ հրապարակման տեքստ պատրաստեք, որոնցում կասկածի տակ դնեք այս նախաձեռնությունը՝ փորձելով շեշտադրել նման բան այս պահին անելու անկարևորությունը և նույնիսկ վտանգը: Պետք է նաև գտնեք Ազգային ժողովի ներկայացուցիչների, ովքեր ևս դեմ են, և նրանց կարծիքն արտացոլեք ձեր հրապարակումներում:	Հրապարակման հինգ տեքստ	Հրապարակումների տեքստի տարածում բոլոր դերակատարների շրջանում

Հանգեցնող լուսավարիչներ–3	Դուք պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ կարճ 5-րոպեանոց ռեպորտաժ պետք է պատրաստեք, որում կներկայացվի պետության կողմից այս հարցի շուրջ կարծիքը, և այդ կարծիքը հիմնավորող տեղեկություններ ու փաստարկներ բերեք նյութի մեջ: Ռեպորտաժի մեջ պիտի ներառեք նաև պետական մոտեցումը պաշտպանող քաղաքացիական հասարակության կառույցների հետ զրույց:	5-րոպեանոց ռեպորտաժ	Ռեպորտաժի ցուցադրում ընդհանուր խմբին

Ամփոփիչ քննարկման հարցեր

Խաղի ընթացքի վերաբերյալ

- Ինչպիսի՞ն է գործընթացից/խաղից ընդհանուր տպավորությունը:
- Ինչպե՞ս էր խումբն աշխատում նախապատրաստական հատվածում, ինչպե՞ս էր աշխատում խաղի ընթացքում:
- Ինչպե՞ս էիք պատկերացնում դերերը և նրանց անելիքները: Որտեղի՞ց էիք քաղում այդ տեղեկությունները: Խաղի ընթացքում դերի մասին պատկերացումը փոխվե՞ց արդյոք, եթե այո, ապա՝ ինչպե՞ս:
- Ինչպե՞ս էին ընդունվում որոշումները, ընտրվում անելիքները, բաշխվում դերերը:
- Ինչպե՞ս էր կառուցվում այլ դերակատարների հետ աշխատանքը, ինչպե՞ս էին միմյանց հետ շփվում առկա դերակատարները, ինչպե՞ս էր այդ շփումն ազդում խաղի ընթացքի և, ի վերջո, արդյունքների վրա:
- Որո՞նք էին աշխատանքում ի հայտ եկող հիմնական բարդությունները, և ինչպե՞ս էին դրանք հաղթահարվում:
- Ի՞նչն էր օգնում հաղթահարել ի հայտ եկած խնդիրները:
- Ինչպե՞ս էին ընտրվում աշխատանքի ռազմավարությունն ու տեսակետը առաջ տանելու քայլերը:
- Հետադարձ հայացք գցելով՝ ի՞նչ որոշումներ կամ գործողություններ կվերանայեիք՝ ձեր դերակատարումը բարձրացնելու համար:

Թեմայի վերաբերյալ

- Ինչի՞ մասին էր այս խաղը Ձեզ համար:
- Ի՞նչ եք կարծում տարբեր դերակատարների մասին, ինչպե՞ս էին նրանք իրենց դրսևորում, ի՞նչն էր զարմացնում:
- Տարբեր դերակատարների հանձնարարությունների հետ կապված ի՞նչ դիտարկումներ ունեք: Ի՞նչ հիմնական գործիքներ էին նրանք կիրառում:
- Որքանո՞վ էր այս խաղը արտացոլում իրական կյանքը, ինչպե՞ս:

- Ի՞նչ հիմնական կողմ և դեմ կարծիքներ կային քվեարկության տարիքը իջեցնելու վերաբերյալ:
- Ի՞նչ եք կարծում՝ հայաստանյան իրականության մեջ ո՞ր որոշումը ամենաճիշտը կլինի: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս են, ըստ Ձեզ, ժողովրդավարական արժեքները կապված ընտրությունների հետ:
- Ձեր շրջապատում կա՞ն արդյոք մարդիկ, ովքեր կուզենային քվեարկել այդ վաղ տարիքում: Ի՞նչը այդ տարիքում կլինի ընտրություններին մասնակցելու հիմնական շարժառիթը:
- Ինչպե՞ս է խաղը խորացրել Ձեր պատկերացումները ժողովրդավարական գործընթացների և որոշումների կայացման մեխանիզմների վերաբերյալ:
- Ի՞նչ հիմնական դասեր եք քաղել խաղին մասնակցությունից:

Ապագա քայլերի շուրջ

- Ի՞նչ հետագա քայլեր կարող եք ձեռնարկել խաղից ստացած գիտելիքները խորացնելու համար:
- Ինչպե՞ս կարող եք օգնել Ձեր հասակակիցներին՝ ավելի լավ պատկերացնել ժողովրդավարական գործընթացների էությունը:
- Մտածեք մեկ կոնկրետ քայլի մասին, որ կանեք անմիջապես խաղի ավարտից հետո՝ ամրապնդելու խաղից ստացած Ձեր արդյունքները:

Քաղվածքներ Սահմանադրությունից

Հոդված 48.

Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հոդված 202.

Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը

1. Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների, Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:

ԽԱՂ 2

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հիմնախնդրի/իրավիճակի նկարագրություն

Կառավարությունն առաջարկում է օրենքի նախագիծ, որով 2030 թվականի դրությամբ, հսկողության տեսախցիկների տեղադրման միջոցով, արդեն իսկ լայնածավալ հսկողության մեխանիզմներ են ներդրվում հետևյալ կառույցներում կամ վայրերում.

- ուսումնական հաստատություններում (դպրոց, քոլեջ, համալսարան),
- առողջապահական հաստատություններում, ինչպիսիք են հիվանդանոցները, կլինիկաները և այլ բժշկական կենտրոնները,
- հանրային վայրերում՝ ներառյալ փողոցները, այգիները, հրապարակները,
- մասնավոր կազմակերպություններում (այստեղ, սակայն, տեսախցիկները կտեղադրվեն նրանց միջոցներով):

Դրան զուգահեռ ներդրվում են նաև դեմքի ճանաչման տեխնոլոգիաներ, որոնց միջոցով տեսանյութերում երևացող անհատներին հնարավոր է նույնականացնել:

Զանգվածային հսկողության մեխանիզմների ներդրումը հիմնավորվում է ահաբեկչության դեմ պայքարելու, հանցագործությունների և սոցիալական անկարգությունների կանխարգելման, ազգային անվտանգության պաշտպանության անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ, զանգվածային հսկողությունը խստորեն քննադատվում է քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների և ՁԼՄ-ների կողմից՝ անձնական կյանքի իրավունքը խախտելու, քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու և իրավական կամ սահմանադրական որոշ կետերի տեսանկյունից անօրինական լինելու համար:

Սա ապահովելու համար անհրաժեշտ է փոփոխություն կատարել Սահմանադրության մեջ, սակայն Ազգային ժողովը այն չի ընդունել, և ԱԺ պատգամավորների երեք հինգերորդը առաջարկել է այն դնել հանրաքվեի: Այս պահին ԱԺ-ում լսումները շարունակվում են:

Միջազգային փորձը ևս, որը ներկայացնում են կողմերը, էականորեն տարբերվում է: Նախագծի հեղինակները օրինակ են բերում Չինաստանի փորձը, որտեղ առկա են զանգվածային հսկողության մեխանիզմներ: Օրինակ՝ Չունցին քաղաքում բնակվող մոտ 15 մլն բնակիչ վերահսկվում են 2.5 միլիոն տեսախցիկով: Չինաստանը ներդրել է նաև «Սոցիալական կրեդիտի համակարգ», որում քաղաքացիներին և ձեռնարկություններին տրվում են կամ նրանցից հանվում են կրեդիտներ՝ ելնելով սոցիալական վարքագծից: Չինաստանի կառավարությունը նախատեսում է նաև փոխկապակցել մոտ 20 մլն տեսախցիկ՝ հագեցած դեմքի ճանաչման տեխնոլոգիաներով, ինչը հնարավորություն կտա մի քանի րոպեի ընթացքում հայտնաբերել մարդկանց:

Ռուսաստանում ևս այս ուղղությամբ առաջընթաց կա. օրինակ՝ Մոսկվայում ավելացվել է ավելի քան 100.000 տեսախցիկ՝ դեմքի ճանաչման տեխնոլոգիաներով: Այլ երկրներ նույնպես, ինչպիսիք են Քենիան, Սերբիան, Վենեսուելան, Ֆիլիպինները և այլն, ձգտում են առաջընթաց ապահովել այս ուղղությամբ:

Ֆրանսիան ևս մի շարք փորձարկումներ է արել այս ուղղությամբ, բայց քննադատները պնդում են, որ Եվրոպական միության (ԵՄ) մի շարք երկրներում այդ համակարգերը չեն կարողանում զարգանալ, քանի որ հակասում են ԵՄ-ում «Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգին» (GDPR), որը վերաբերում է տվյալների պաշտպանությանը և գաղտնիությանը: Այդպիսով՝ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան,

Շվեյցարիան, Նորվեգիան, Դանիան, զանգվածային հսկողությունը մեծ մասամբ համարում են հակասահմանադրական:

Ինչն է դրվում հանրաքվեի

Առաջարկվում է ՀՀ Սահմանադրության Հոդված 34-ում՝ «Անձնական տվյալների պաշտպանությունը», ավելացնել հետևյալ կետը.
Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը չի վերաբերում զանգվածային հսկողության մեխանիզմներով հավաքված տվյալներին և դրանց օգտագործմանը կամ մշակմանը:

Հիմնավորումներ

Կողմ փաստարկներ

Կառավարությունը հիմնավորում է լայնածավալ հսկողության մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը՝ որպես ազգային անվտանգության բարձրացման միջոցների: Գլոբալ սպառնալիքների աճը, ինչպիսիք են ահաբեկչությունը, կազմակերպված հանցագործությունը և անկարգությունները, ինչպես նաև արտերկրյա փախստականների ներհոսքը դեպի Հայաստան, անհրաժեշտ են դարձնում ունենալ համատարած հսկողություն՝ հնարավոր սպառնալիքները վերահսկելու և կանխելու համար:

Այս օրենքի կողմնակիցները պնդում են, որ հսկողության ավելացումը կարող է նպաստել հանցավոր գործողությունների զսպմանը և բարելավել հանրային անվտանգությունը: Մասնավորապես, ստորև թվարկվող կառույցներում կամ վայրերում հսկողության մեխանիզմների ներդրումը հիմնավորվում է հետևյալ կերպ.

1. ուսումնական հաստատություններ.

- Կապահովի սովորողների և անձնակազմի անվտանգությունը, ինչպես նաև անվտանգությունը ուսումնական հաստատություններում: Կկանխվեն բռնության, բուլինգի, վանդալիզմի և չարտոնված մուտքի դեպքերը:
- Դասասենյակներում, միջանցքներում և ընդհանուր տարածքներում գործունեությունը կվերահսկվի՝ նպաստելով դասալքությունը, զգայուն տարածքներ չարտոնված մուտքը կանխելուն:
- Տեսախցիկների առկայությունը կարող է բարձրացնել ինչպես ուսանողների, այնպես էլ ուսուցանողների պատասխանատվությունը՝ ապահովելով համապատասխան վարքագծի պահպանումը և հեշտացնելով ցանկացած սխալ վարքագծի կամ վեճի հետաքննությունը:

2. առողջապահական հիմնարկներ.

- Կնպաստի հիվանդներին, անձնակազմին և բժշկական հաստատությունները բռնության, գողության կամ չարտոնված մուտքի դեպքերից պաշտպանելուն:
- Այնպիսի կարևոր վայրերում, ինչպիսիք են շտապ օգնության սենյակները, վիրահատարանները և դեղորայքի պահեստային սենյակները, կլինի ուժեղացված վերահսկողություն:

3. Հանրային վայրեր (փողոցներ, այգիներ)

- Էականորեն կզսպվեն և կհայտնաբերվեն հանցավոր գործողությունները, ինչպիսիք են գողությունը, վանդալիզմը և հարձակումը:
- Կվերահսկվեն մարդաշատ վայրերը և հնարավոր արտակարգ իրավիճակներին (օրինակ՝ վթարներ, հրդեհներ, բժշկական արտակարգ իրավիճակներ) ավելի արագ արձագանք կլինի, և ավելի շատ կյանքեր կարող են փրկվել:
- Երթևեկության հոսքը ևս ավելի ուժեղ կվերահսկվի՝ զսպելով խախտումները, նպաստելով տրանսպորտային համակարգերի ավելի անվտանգ և արդյունավետ շահագործմանը:

4. Մասնավոր կազմակերպություններ (սեփական ռեսուրսներով).

- Կազմակերպություններում կմեծանա անվտանգությունը, և նրանց ակտիվները ավելի պաշտպանված կլինեն գողությունից, վանդալիզմից և չարտոնված մուտքից:
- Կնպաստեն անվտանգ աշխատանքային միջավայրի ստեղծմանը՝ զսպելով աշխատավայրում ոտնձգությունները, բռնությունները և սխալ վարքագիծը, ինչպես նաև հնարավոր վեճերի հետ կապված ապացույցներ կլինեն:

Հակափաստարկներ

Քննադատները պնդում են, որ նման համատարած հսկողությունը կոպտորեն խախտում է անհատների գաղտնիության իրավունքը: Կրթական, առողջապահական և հասարակական վայրերում, ինչպես նաև մասնավոր կազմակերպություններում մարդկանց մշտական մոնիթորինգը կարող է հանգեցնել արտահայտվելու և վարքի ազատության վրա բացասական ազդեցության այն տեսանկյունից, որ սա, իր հերթին, էապես կխաթարի վստահությունը հասարակության ներսում՝ խթանելով կասկածների և պարանոյայի մթնոլորտի խտացումը: Քաղաքացիները կարող են զգալ, որ մշտապես դիտվում և հսկվում են, ինչը հանգեցնում է սոցիալական համախմբվածության նվազմանը և համայնքի վստահության խզմանը:

Մտահոգություններ կան նաև քաղաքացիական ազատությունների և ժողովրդավարական արժեքների քայքայման վերաբերյալ: Քաղաքացիները կարող են զգալ, որ տեղաշարժվելու, միավորվելու և արտահայտվելու ազատության իրենց հիմնարար իրավունքները սահմանափակվում են անվտանգության միջոցների քողի ներքո:

Քննադատները ահազանգում են նաև պետական մարմինների և այլ համապատասխան կազմակերպությունների կողմից վերահսկողության տեխնոլոգիաների չարաշահման հնարավորության մասին: Վտանգ կա, որ հավաքված տվյալները կարող են չարաշահվել անվտանգությունից դուրս նպատակների համար, ինչպիսիք են քաղաքական հսկողությունը կամ որոշակի խմբերի թիրախավորումը:

Նշվում է նաև, որ վերահսկողության նման լայնածավալ համակարգերի ներդրումն ու պահպանումը զգալի ֆինանսական ռեսուրսներ և աշխատուժ կպահանջեն: Քննադատները պնդում են, որ ավելի նպատակահարմար կլինի այդ ռեսուրսներն ուղղել սոցիալական այնպիսի հրատապ խնդիրների լուծմանը, ինչպիսիք են առողջապահական, կրթական, աղքատությանը և ենթակառուցվածքներին վերաբերող խնդիրները: Սա էական հարց է՝ ուղղված կառավարության առաջնահերթություններին, որոշելու, թե վերահսկողության օգուտները գերակշռում են ծախսերին:

Ազգային ժողով

- Ազգային ժողով–1. Դուք ԱԺ իշխանական բլոկի պատգամավոր եք, և ձեր խմբակցությունը որոշել է, որ չի խոչընդոտելու սահմանադրական փոփոխության հանրաքվեին, սակայն ԱԺ-ում չի հաստատել սահմանադրական այս փոփոխությունը ընդդիմադիր խմբակցությունների շահարկումներից խուսափելու համար: - 2 հոգի

- Ազգային ժողով–2. Դուք ԱԺ ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչ եք և դեմ եք սահմանադրական այս փոփոխությանը, քանի որ կարծում եք, որ մարդու անձնական տվյալների գաղտնիության դեմ է ուղղված և կարող է հանգեցնել պետության կողմից հասարակության տոտալ վերահսկողության և անազատության: Նախաձեռնությանն ուղղված ակտիվ հակաքարոզչություն եք տանում: -2 հոգի

- Ազգային ժողով–3. Դուք ղեկավարում եք իրավական հարցերի խորհրդարանական հանձնաժողովը, որը պատասխանատու է դեմքի ճանաչման տեխնոլոգիային առնչվող առաջարկվող օրենսդրության մանրակրկիտ ուսումնասիրության համար և երաշխավորելու, որ անվտանգության անհրաժեշտությանը զուգահեռ էականորեն չեն չարաշահվում մարդու հիմնարար իրավունքները: Միաժամանակ պատասխանատու եք այս թեմայով Ազգային ժողովում Կառավարության, Սահմանադրական դատարանի, ՀԼՄ-ների և ՔՀԿ-ների ներկայությամբ հանրային լսումների կազմակերպման համար: Դուք պետք է հետևեք, որ լսումներն ընթանան սահուն և առանց բարդ միջադեպերի: Միևնույն ժամանակ՝ կասկածներ ունեք նախագծի՝ մարդու իրավունքների սահմանափակման առումով: - 1 հոգի

Կառավարություն

- Կառավարություն–1. Դուք ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) ղեկավարներից եք և ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ համատեղ հանդես եք եկել այս նախաձեռնությամբ: Դուք, որպես Հայաստանի հիմնական հետախուզական գործակալություն, որը պատասխանատու է ազգային անվտանգության հարցերի համար, կողմ եք այդ փոփոխությանը: Հանրային գործունեություն շատ չեք ծավալում, սակայն ազդեցության բոլոր լծակներով նպաստում եք դրական եզրահանգմանը: -1 հոգի

- Կառավարություն–2. Դուք Արդարադատության նախարարության ներկայացուցիչ եք և պատասխանատու եք իրավական հարցերի վերահսկողության համար, ներառյալ տվյալների պաշտպանության օրենքներն ու կանոնակարգերը: Անձնական տվյալների պաշտպանության գործակալության միջոցով ստանձնել եք տվյալների պաշտպանության մասին օրենքների կիրառության ու միջազգային չափանիշներին՝ ներառյալ Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգին (GDPR) համապատասխանության ապահովումը: Դուք հիմնական կողմն եք, որը հանրությանը ներկայանում է որպես անհատների գաղտնիության իրավունքների պաշտպանվածությունը երաշխավորող, հանդես եք գալիս ասուլիսներով և նման օրինակների մասին պատմող պարզաբանումներով: - 1 հոգի

- Կառավարություն–3. Դուք Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչ եք: Հայաստանն ակտիվորեն խթանում է իր բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը, ներառյալ այնպիսի զարգացող տեխնոլոգիաների զարգացումն ու ընդունումը, ինչպիսիք են արհեստական բանականությունը (AI) և կենսաչափական տեխնոլոգիաները: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը շահագրգռված է նորարարությունը ազգային

մակարդակում փորձարկելու և իր վարկանիշը մեծացնելու հարցում՝ միաժամանակ անդրադառնալով և վերապահումներ ունենալով էթիկական նկատառումների առումով: - 1 հոգի

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–1. Դուք «Իմ կյանքը՝ ԵՍ» մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ի նախագահության անդամ եք: Համարում եք, որ առաջարկվող փոփոխությունը ամբողջովին հակասում է մարդու սահմանադրական իրավունքներին և ակտիվ հակաքարոզչություն եք անում. ձեր կողմից կազմակերպվող արշավները հիմնականում ռադիկալ բնույթ ունեն, և երկխոսություն չեք ծավալում: -2 հոգի

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն–2. Դուք «ԽԵԼԱՄԻՏ» փորձագիտական հասարակական կազմակերպության խորհրդի անդամ եք: Ձեր կառույցը միավորում է բազմաթիվ հետազոտողների և ակադեմիկոսների: Ձեր կառույցը կողմ է այս նախաձեռնությանը, քանի որ համարում է, որ հավաքված տեղեկատվությունը կարող է հրաշալի նյութ դառնալ հասարակագիտական հետազոտությունների, վարքագծային վերլուծության և այլ գիտական նվաճումների ու դրանց՝ երկրի առավել արդյունավետ կառավարման գործում օգտագործելու համար: - 1 հոգի

- Քաղաքացիական հասարակության կառույց-3. Դուք ներկայացնում եք երեխաների զարգացման, իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցների «Անվտանգ մանկություն» ասոցիացիան, որը միավորում է տարբեր կազմակերպությունների, որոնք առաջադրում են այն գաղափարը, որ ժամանակակից աշխարհի միտումները գնալով ավելի վտանգավոր են դարձնում երեխայի կյանքի պայմանները հանրային վայրերում: Այս փոփոխությունը դուք գնահատում եք որպես երեխաների անվտանգությունը ապահովելու լավ միջոց: - 2 հոգի

- Քաղաքացիական հասարակության կառույց–4. Դուք հետազոտություններ իրականացնող «ԲԱՑԱհայտում» հասարակական կառույցի ներկայացուցիչ եք, որը մի շարք ուսումնասիրություններ է կատարել թեմայի վերաբերյալ, ունի և՛ կողմ, և՛ դեմ մի շարք փաստարկներ, սակայն ընդհանուր առմամբ դեմ է նախագծին: Դուք դիրքորոշումը հիմնավորում եք նրանով, որ մարդկանց մշտական մոնիթորինգը կարող է հանգեցնել արտահայտվելու և վարքի ազատության վրա բացասական ազդեցության, այն տեսանկյունից, որ այն, իր հերթին, էապես կխաթարի վստահությունը հասարակության ներսում՝ խթանելով կասկածների և պարանոյայի մթնոլորտի խտացումը, կբերի սոցիալական համախմբվածության նվազմանը և հանրության ներսում վստահության խզմանը: - 2 հոգի

Դատական մարմիններ

- Դատական մարմին–1. Դուք Սահմանադրական դատարանի դատավոր եք, որը պատասխանատու է այս նախաձեռնությանը իրավական եզրակացություն տալու համար: Պահպանում եք չեզոքություն և ցանկանում եք, վերլուծելով բոլոր կողմ և դեմ կարծիքներն ու վերլուծությունները, տալ իրավական եզրահանգում՝ արդյոք վերոնշյալ փոփոխությունը չի հակասում առկա օրենսդրական ակտերին և մարդու հիմնարար իրավունքներին: - 1 հոգի

- Դատական մարմին–2. Դուք Սահմանադրական դատարանի ներկայացուցիչ եք՝ դատավորի օգնական, որը պետք է վեր հանի այդ փոփոխությունից բխող մի շարք այլ իրավական ակտերում փոփոխությունների կարիքը և ամփոփ ներկայացնի ՍԴ դատավորին՝ եզրակացության համար: Հիմնական կապը շահագրգիռ կողմերի հետ

պահվում է նաև Ձեր միջոցով: - 1 հոգի

Ձանգվածային լրատվամիջոց

- Ձանգվածային լրատվամիջոց–1. Դուք միջազգային «NEWS360» լրատվամիջոցի հայաստանյան ներկայացուցիչն եք: Դուք ընդհանուր առմամբ կարևորում եք այս սահմանադրական փոփոխությունը և մտադիր եք օբյեկտիվորեն լուսաբանել բոլոր կարծիքները: - 2 հոգի
- Ձանգվածային լրատվամիջոց–2. Դուք «Դեմֆակտո» խիստ ընդդիմադիր լրատվամիջոցի ներկայացուցիչն եք և մտադիր եք բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել այս հանրաքվեի հետ կապված մեծ աղմուկ բարձրացնելու և իշխանական խմբակցության վարկանիշի նվազմանը նպաստելու նպատակով: -2 հոգի
- Ձանգվածային լրատվամիջոց–3. Դուք «Ազգային ԹիՎԻ» հանրային պետականամետ լրատվամիջոցից եք: Ձեր առաջնային խնդիրը Կառավարության պաշտոնական մոտեցումներն ու կարծիքները լուսաբանելն է, ջանքերը կենտրոնացնելը՝ հիմնավորումներ, տվյալներ, մեջբերումներ, օրինակներ գտնելու հենց այդ մոտեցումների պաշտպանության համար: - 2 հոգի



Դերը	Հանձնարարությունը	Արդյունքը	Տրամադրումը
Կառավարություն-1	Դուք ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) ղեկավարներից եք ու, փակ լինելով հանրության լայն շերտերի հետ քննարկումների համար, նախարարությունների հետ հանդիպումների և ԱԺ-ում լսումների ժամանակ ակտիվորեն նպաստում եք փոփոխությանը: Պետք է կազմեք մեկ էջանոց հիմնավորումներ՝ ինչ կտա նշված փոփոխությունը ազգային անվտանգության տեսանկյունից: Ելույթում պիտի հստակ երևան Ձեր դիրքորոշումը, դրա հիմնավորումները և սահմանադրական փոփոխության դրական ազդեցությունը ՀՀ անվտանգային իրադրության վրա: ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ նախընտրում եք չհանդիպել, սակայն դիմելու դեպքում կարող եք հանդիպել ՔՀԿ ներկայացուցիչների հետ:	Փաստարկների ցանկ	Հանդիպում ԱԺ-ում, ՀԿ անդամների հետ
Կառավարություն-2	Դուք Արդարադատության նախարարության ներկայացուցիչ եք և պետք է ուսումնասիրեք, թե ինչ կողմ փաստարկներ կան նման փոփոխություններ կատարող երկրներում: Պիտի պատրաստեք թվային ցուցանիշների կանխատեսումների շատ հստակ ցանկ, թե նախաձեռնության հաստատման դեպքում ինչ դրական փոփոխություններ կլինեն (չափելի տեսքով), և դրանց մասին պատրաստեք փոքրիկ ելույթ (2 րոպե տևողությամբ) ԱԺ լսումների համար: Ելույթում պետք է հստակ երևան Ձեր նախարարության դիրքորոշումը, դրա հիմնավորումները և սահմանադրական փոփոխության դրական ազդեցությունը ՀՀ անվտանգային իրադրության վրա: Եթե ձեզ դիմեն ՁԼՄ-ների ներկայացուցիչները, անպայման համագործակցեք նրանց հետ: Այլ շահառուների Ձեզ դիմելու պարագայում կողմնորոշվեք ըստ հնարավորության և ժամանակի առկայության:	Ինֆոգրաֆիկա կամ տեղեկատվական թերթիկ	Հանդիպում այլ

Կառավարություն-3	Դուք, որպես Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչ, պետք է ցույց տաք նորարարության ներդրման դրական կողմերը տնտեսության վրա և դիրքավորեք Հայաստանը որպես բարձր տեխնոլոգիական ուղիով ընթացող երկիր, որը մոտիվացված է ներդնելու արհեստական ինտելեկտը (AI) կյանքի տարբեր ոլորտներում: Դուք ակտիվորեն շփվում եք շահագրգիռ բոլոր կողմերի հետ և ներկայացնում վիզուալ տվյալներ՝ ցուցադրելով, թե ինչ դրական ազդեցություն կարող է լինել:	Ինֆոգրաֆիկա կամ տեղեկատվական թերթիկ, նկարներ	Հանդիպում ՁԼՄ-ների, ՀԿ անդամների հետ
Դատական մարմին-1	Դուք պետք է փորձագիտական կարծիք տաք առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ: Որպես Սահմանադրական դատարանի ներկայացուցչի՝ Ձեզ համար կարևոր է հատկապես իրավական փորձագիտական կարծիք մշակելը: Դուք պետք է հանդիպում անցկացնեք Արդարադատության նախարարության հետ՝ հասկանալու նման նախաձեռնության հիմնավորումները, և հանդիպման արդյունքում մշակեք Ձեր եզրակացությունը: Դուք սերտորեն պետք է աշխատեք Ձեր օգնականի հետ:	Եզրակացություն	Եզրակացության ներկայացում ԱԺ լսումների ժամանակ
Դատական մարմին-2	Դուք Սահմանադրական դատարանի դատավորի օգնական եք և պետք է մշակեք այս փոփոխությունից բխող մի շարք այլ իրավական ակտերում փոփոխությունների ամփոփագիր և ներկայացնեք ՍԴ դատավորին՝ եզրակացության համար: Հիմնական կապը շահագրգիռ կողմերի հետ պահվում է նաև Ձեր միջոցով:	Փոփոխվելու ենթակա իրավական ակտերի ցանկ՝ օրենքի կետի համապատասխան հղումներով Հանդիպումների արձանագրություն Կառավարության, ԱԺ, ՔՀԿ ներկայացուցիչների հետ:	Ամփոփագիր 1 էջի սահմանում
Ազգային ժողով-1	Դուք ԱԺ իշխանական բլոկի պատգամավոր եք, և ձեր խմբակցությունը որոշել է, որ չի խոչընդոտելու Սահմանադրական փոփոխության հանրաքվեին, սակայն ԱԺ-ում չի հաստատել այն՝ ընդդիմադիր խմբակցությունների շահարկումներից խուսափելու համար: Դուք նախապատրաստում եք հարցեր, հանդիպում եք բոլոր շահագրգիռ կողմերի հետ, արտաքուստ չեզոք դիրք եք պահում:	Հարցեր, հիմնավորումներ	Հանդիպում Կառավարության, ՁԼՄ-ների, ՀԿ անդամների հետ

Ազգային ժողով-2	Դուք ԱԺ ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչ եք և դեմ եք այս սահմանադրական փոփոխությանը, քանի որ կարծում եք, որ այն մարդու անձնական տվյալների գաղտնիության դեմ է ուղղված և կարող է հանգեցնել պետության կողմից հասարակության տոտալ վերահսկողության և անազատության: Տանում եք նախաձեռնությանն ուղղված ակտիվ հակաքարոզչություն: Հանդես եք գալիս ելույթներով, մամլո ասուլիս եք տալիս:	Ելույթի տեքստ՝ հիմնավորումներով, ասուլիսի հարցուպատասխան	Հանդիպում ՁԼՄ-ների, ՀԿ անդամների հետ
Ազգային ժողով-3	ԴուքԱԺԻրավականհարցերիիխորհրդարանական հանձնաժողովի նախագահն եք, պատասխանատու եք ներդրվող տեխնոլոգիային առնչվող առաջարկվող օրենսդրության մանրակրկիտ ուսումնասիրության համար: Կազմակերպելու եք այս թեմայով Ազգային ժողովում Կառավարության, Սահմանադրական դատարանի, ՁԼՄ-ների և ՔՀԿ-ների ներկայությամբ հանրային լսումներ: Դուք պետք է հետևեք, որ լսումներն ընթանան սահուն և առանց բարդ միջադեպերի: Կատարում եք նաև ներքին վերլուծություն՝ փարատելու Ձեր կասկածները նախագծի իրավաչափության շուրջ:	Լսումների օրակարգ, արձանագրություն, նկարներ	Հանրային լսումներ ԱԺ-ում
Քաղաքացիական հասարակության կառույց-1	Դուք պետք է մշակեք ձեր կառույցի անդամ կազմակերպությունների համատեղ հայտարարություն: Այն պետք է ներառի իրավիճակի նկարագրություն, առկա բացեր, առաջարկվող ուսման հիմնավորում և փաստեր, օրինակներ, հակադիր կարծիքների հակափաստարկներ: Հայտարարությունը պետք է ներկայացվի ՁԼՄ-ներին և ԱԺ համապատասխան հանձնաժողովին՝ լսումների ժամանակ: Դուք պետք է ուսումնասիրեք և «ԲԱՑԱհայտում» ՀԿ-ի տրամաբանությանը համապատասխան հավաքեք և՛ կողմ, և՛ դեմ մի շարք փաստարկներ, օրինակներ, հետազոտական նյութեր, առկա փորձ, և մամլո ասուլիսի ժամանակ ներկայացնեք ձեր դիրքորոշումներն այն մասին, որ նման փոփոխությունը հնարավոր կլինի միայն հասարակության ներսում վստահության բարձր մակարդակի դեպքում: Դուք տվյալներ ունեք, որ նման փոփոխությունը ավելի շուտ բացասաբար կազդի հասարակության՝ որպես քաղաքացիների վարքագծի, ազատ կամքի արտահայտման վրա: Ձեզ հարկավոր է ՁԼՄ-ներում լավ լուսաբանում:	Փաստարկների ցանկ, մամուլի հաղորդագրություն	Մամլո ասուլիսի հրավիրում Մասնակցություն թեմատիկ քննարկումներին

Քաղաքացիական հասարակության կառույց-2	Ձեր կառույցը միավորում է բազմաթիվ անվանի գիտնականների, այդ թվում՝ ակադեմիկոսների, և կողմ է այս նախաձեռնությանը: Դուք պետք է քարոզարշավ պլանավորեք և իրականացնեք, որն ամբողջովին պաշտպանում է սահմանադրական փոփոխությունը: Քարոզարշավի համար պետք է պատրաստեք վիզուալ նյութեր, պաստառներ, գրեք լոզունգներ: Դուք շեշտը դնում եք այն բանի վրա, որ հավաքված տեղեկատվությունը կարող է հրաշալի նյութ դառնալ հասարակագիտական հետազոտությունների, վարքագծային անալիզի և այլ գիտական նվաճումների ու դրանց՝ երկրի առավել արդյունավետ կառավարման գործում օգտագործելու համար: Քարոզարշավը կարևոր է, որ լայն լուսաբանում ստանա, ուստի խիստ կարիք կա ՁԼՄ-ների հետ սերտ համագործակցության և ձեր քարոզարշավի շրջանակներում ԱԺ լսումների ժամանակ քարոզարշավի որևէ գործողության իրականացման:	Փաստարկների ցանկ, քարոզարշավի վիզուալ նյութեր	Քարոզարշավի իրականացում ԱԺ հանրային լսման ժամանակ
Քաղաքացիական հասարակության կառույց-3	Ասոցիացիայով դուք պետք է տվյալներ, փաստեր, օրինակներ, թվեր հավաքեք, որոնք ապացուցում են, որ այս նախաձեռնությունը անհրաժեշտ է, որ այդ փոփոխությունը պետք է արվի, քանի որ ժամանակակից աշխարհի միտումները գնալով ավելի վտանգավոր են դարձնում երեխայի կյանքի պայմանները հանրային վայրերում: Դուք պետք է հոդված պատրաստեք, որում ներառեք բոլոր փաստերը: Այդ հոդվածը պետք է հրապարակեք ՁԼՄ-ներից մեկում և ներկայացնեք ձեր տվյալները Կառավարության հետ կազմակերպված հանդիպմանը:	Հոդված, նախարարությունների հետ հանդիպման մասին վիզուալ նյութ	Հոդվածի հրապարակում, Հանդիպում ԱԺ ում և Կառավարության հետ
Քաղաքացիական հասարակության կառույց-4	Դուք պետք է ուսումնասիրեք և «ԲԱՑԱհայտում» ՀԿ-ի տրամաբանությանը համապատասխան հավաքեք և՛ կողմ, և՛ դեմ մի շարք փաստարկներ, օրինակներ, հետազոտական նյութեր, առկա փորձ, և մամլո ասուլիսի ժամանակ ներկայացնեք ձեր դիրքորոշումներն այն մասին, որ նման փոփոխությունը հնարավոր կլինի միայն հասարակության ներսում վստահության բարձր մակարդակի դեպքում: Դուք տվյալներ ունեք, որ նման փոփոխությունը ավելի շուտ բացասաբար կազդի հասարակության՝ որպես քաղաքացիների վարքագծի, ազատ կամքի արտահայտման վրա: Ձեզ հարկավոր է ՁԼՄ-ներում լավ լուսաբանում:	Փաստարկների ցանկ, մամուլի հաղորդակցություն	Մամլո ասուլիսի հրավիրում, մասնակցություն թեմատիկ քննարկումների

Զանգվածային լրատվամիջոց-1	Դուք պետք է ուսումնասիրեք, թե ինչ հետաքրքիր տեղեկություններ և հրապարակումներ կան այս թեմայով միջազգային և արտասահմանյան լրատվամիջոցներում և պատրաստեք ընդհանրացված մի փոքր հոդված՝ նշելով աղբյուրները: ԱԺ ընդդիմադիր և իշխանական խմբակցությունների և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ պիտի տեսանկարահանեք 10 րոպե տևողությամբ բանավեճ և այն տեղադրեք հանդիպման սոցիարթակում:	Փաստարկների ցանկ, բանավեճի տեսագրություն	Տեսագրության տարածում ընդհանուր խմբում
Զանգվածային լրատվամիջոց-2	Դուք ամեն գնով ուզում եք տապալել Կառավարության ցանկացած նախաձեռնություն, ուստի պետք է սոցիալական հարթակներում արվող տարբեր հրապարակումների տեքստեր պատրաստեք, որոնք մեծ ինտենսիվությամբ պետք է ներկայացնեք ներգրավված բոլոր կողմերին: Դուք պետք է պատրաստեք հրապարակման հինգ տեքստ, որոնցում կասկածի տակ կդնեք այս նախաձեռնությունը՝ փորձելով շեշտադրել նման բան այս պահին անելու անկարևորությունը և նույնիսկ վտանգը:	Հրապարակման հինգ տեքստ	Հրապարակումների տեքստերի տարածում բոլոր դերակատարների շրջանում
Զանգվածային լրատվամիջոց-3	Դուք պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ կարճ 5-րոպեանոց ռեպորտաժ պետք է պատրաստեք տեսանյութի տեսքով, որում կներկայացվի պետության կողմից այս հարցի շուրջ կարծիքը և այդ կարծիքը հիմնավորող տեղեկություններ ու փաստարկներ բերեք նյութի մեջ: Ռեպորտաժի մեջ պիտի ներառեք նաև պետական մոտեցումը պաշտպանող ՀԿ-ների հետ զրույց:	5-րոպեանոց ռեպորտաժ	Ռեպորտաժի ցուցադրում ընդհանուր խմբին

Ամփոփիչ քննարկման հարցեր

Ընթացքի վերաբերյալ

- Ինչպիսի՞ն է ընդհանուր տպավորությունը գործընթացից/խաղից:
- Ինչպե՞ս էր խումբն աշխատում նախապատրաստական հատվածում, ինչպես էր աշխատում խաղի ընթացքում:
- Ինչպե՞ս էիք պատկերացնում դերերը և նրանց անելիքները: Որտեղի՞ց էիք քաղում այդ տեղեկությունները: Խաղի ընթացքում դերի մասին պատկերացումը փոխվե՞ց արդյոք, եթե այո, ապա՝ ինչպե՞ս:
- Ինչպե՞ս էին ընդունվում որոշումները, ընտրվում անելիքները, բաշխվում դերերը:
- Ինչպե՞ս էր կառուցվում այլ դերակատարների հետ աշխատանքը, ինչպե՞ս էին միմյանց հետ շփվում առկա դերակատարները, ինչպե՞ս էր այդ շփումն ազդում խաղի ընթացքի և, ի վերջո, արդյունքների վրա:
- Որո՞նք էին աշխատանքում ի հայտ եկող հիմնական բարդությունները, և ինչպե՞ս էին դրանք հաղթահարվում:
- Նկարագրեք, թե համագործակցության կամ կոնֆլիկտային ի՞նչ դեպքեր եղան այլ դեր ունեցող գործընկերների հետ: Ինչպե՞ս էիք մոտենում այդ հարցերին:
- Հետադարձ հայացք գցելով՝ ի՞նչ որոշումներ կամ գործողություններ կվերանայեիք՝ ձեր դերակատարումը բարձրացնելու համար:

Թեմայի վերաբերյալ

- Որո՞նք էին Ձեր նախնական կարծիքները և զգացումները առաջարկվող նախաձեռնության հետ կապված:
- Ձեր դիրքորոշումը փոխվե՞ց արդյոք առաջարկվող նախագծի նկատմամբ խաղի ընթացքում: Եթե այո, ինչու՞:
- Որքանո՞վ էր այս խաղը արտացոլում իրական կյանքը, ինչպե՞ս:
- Ի՞նչ հիմնական դասեր քաղեցիք խաղին մասնակցությունից:

Ապագա քայլերի շուրջ

- Ի՞նչ հետագա քայլեր կարող եք ձեռնարկել խաղից ստացած գիտելիքները խորացնելու համար:
- Ինչպե՞ս կարող եք օգնել Ձեր հասակակիցներին՝ ավելի լավ պատկերացնելու ժողովրդավարական գործընթացների էությունը:

Մտածեք մեկ կոնկրետ քայլի մասին, որ կանեք անմիջապես խաղի ավարտից հետո՝ ամրապնդելու խաղից ստացած Ձեր արդյունքները:

ԽԱՂ 3

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի նկարագրություն և համատեքստ

Հայաստանի միշարք մարզերում դեռևս խորհրդային տարիներից շահագործվում են բազմաթիվ հանքավայրեր: Ըստ հայ գիտնականների հետազոտությունների՝ այդ տարածքներում կենսաբազմազանությունը վերացել է 40%-ով: Հանքերի շահագործման ավարտից հետո տեղացի բնակիչներն արտագաղթում են հանքարդյունահանման այլ գոտիներ՝ աշխատանք փնտրելու, ինչի հետևանքով դատարկվում են գյուղական համայնքները, սրընթաց աճում է ուրբանիզացիայի շեմը:

ՀՀ առողջապահության նախարարության ամենամյա հետազոտությունները ցույց են տալիս, որ երկրում աճել է սիրտանոթային, շնչուղիների բորբոքային հիվանդությունների թիվը, ընդ որում չարորակ ուռուցքով հայտնաբերվող դեպքերը երիտասարդների շրջանում հուշում են դրա երիտասարդացման մասին: Ըստ մասնագետների՝ հիմնական պատճառն այն է, որ բուժառուները բնակվում են այնպիսի տարածքներում, որտեղ օդը, ջուրն ու հողը աղտոտված են, իսկ հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, մասնավորապես՝ անասնապահությունը: Գաղտնիք չէ, որ այս ոլորտների համար անկյունաքարային նշանակություն ունեն բնական պայմաններն ու բնական միջավայրը:

Այս իրավիճակում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը հանդես է եկել ՀՀ ընդերքի մասին օրենքում էական փոփոխություն կատարելու առաջարկով, որը երկրի ներսում իրարամերժ տրամադրություններ է առաջացրել: Փոփոխությամբ նախատեսվում է առաջիկա 2 տարվա ընթացքում հանրապետությունում մինչև 70%-ով կրճատել մետաղական հանքերի շահագործումը:

Հակառակ այս պատկերի՝ առաջարկվող փոփոխությանն ընդդիմացողները շեշտը դնում են այն հանգամանքի վրա, որ երկրի տնտեսական համակարգը տարեցտարի ոչ միայն պահպանում է 7% տնտեսական աճի ցուցանիշը, այլև, ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների, առաջիկա 1-2 տարվա ընթացքում կարող է գրանցել երկնիշ աճի ցուցանիշ՝ գերազանցելով ոչ միայն Հարավային Կովկասի, այլև հետխորհրդային ամբողջ տարածաշրջանի և Արևելյան Եվրոպայի երկրների համեմատ ամենաբարձր պատմական ցուցանիշը: Իսկ մետաղական հանքերն ահռելի դեր են խաղում, քանի որ խոշորագույն հարկ վճարող 10 կազմակերպությունից 3-ը մետաղական հանքերն են:

Քվեարկության դրվող հարցը

Համաձայն եք ԸՆԴԵՐՔՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ԿՈՆՑԵՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ օրենքում փոփոխություն առաջարկող ՀՀ շրջակա միջավայրի նախարարության որոշման նախագծին՝ մինչև 2026 թվականը ՀՀ-ում մետաղական ծագման հանքերի

շահագործումը 70 %-ով կրճատելու վերաբերյալ:

Հիմնավորումներ

Փաստարկներ

- Հանքերի շահագործումից եկած բնապահպանական վճարներն ու հարկերը ավելի քիչ են, քան հանրային առողջապահության և անտառների (կենսաբազմազանության) վերականգնման համար ծախսվող գումարները. հարաբերակցությունը 5-ը 1-ի է: Միայն 2019թ. հետազոտությամբ ՀՀ-ում 44 լքված պոչամբար կա, որոնք ռեկուլտիվացված չեն և շարունակում են թունավորել շրջակա բնական ռեսուրսները:

- Հայաստանում հանքարդյունաբերությանը սպասարկող դաշտը թե՛ օրենսդրական, թե՛ ենթակառուցվածքային, թե՛ պետական-վերահսկողական առումներով բավականաչափ զարգացած չէ, որպեսզի նախևառաջ կարգավորի գործող մետաղական հանքերի գործունեությունը:

- Հայաստանը բարձր մակարդակով մտադիր է մինչև 2030թ. ըստ արժանվույն հասնել ՄԱԿ-ի Կայուն զարգացման 17 նպատակներին: Բացի դրանից՝ Հայաստանը ստանձնել է սեփական տնտեսական համակարգը ավելի կայուն, կլիմայական տեսանկյունից բարենպաստ ու կանաչ համակարգի վերածելու ռազմավարությամբ շարժվելու պարտավորություն, ինչը լիովին բխում է Եվրոպական միության հետ 2017 թ. Հայաստանի կնքած Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (CEPA):

- Ազդակիր համայնքների բնակչության կողմից ամենօրյա ռեժիմով ստացվում են տասնյակ դիմում-բողոքներ, քանի որ հանքերի գործունեության արդյունքում անկում են ապրում գյուղատնտեսական նշանակության հողերն ու անասնագլխաքանակը, աղտոտվում են տարածքով հոսող գետերն ու առուները: Գիտնականների և բնապահպանների հետազոտությունների ու կանխատեսումների համաձայն՝ մինչև 2050 թ. Հայաստանը կարող է կորցնել իր ջրային ռեսուրսների մինչև 30 %-ը, եթե կտրուկ միջոցառումներ չձեռնարկվեն:

Հակափաստարկներ

- Առաջարկվող փոփոխությունը խանգարելու է Հայաստանի ներդրումային քաղաքականությանը, որի ուղղությամբ նույնպես ՀՀ-ն միջազգային պարտավորություններ է ստանձնել: Վերջին տարիներին ՀՀ-ն տարածաշրջանային երկրների համեմատ կայուն տեմպերով 7-8 հորիզոնականով բարձրանում է իր ներդրումային բարենպաստ միջավայրի դրական ցուցանիշներով:

- Փոփոխության մասին նախագիծն իր հետ բերելու է Հայաստանի՝ որպես գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ միջավայր ունեցող երկրի

համբավի անկում միջազգային հեղինակավոր վարկանիշերում: Խոսքը հատկապես արդյունաբերության ոլորտում կատարվող օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) մասին է, որոնք կարող են գործազրկության և աղքատության վիճակագրական ցուցանիշների աճի պատճառ դառնալ:

- Նախագիծը խախտում է տնտեսվարողների իրավունքները: ՀՀ-ի թոփ-10 հարկատուներից 3-ը հանքարդյունաբերության ոլորտում են աշխատում: Ազդակիր համայնքներում բազմաթիվ սոցիալական ծրագրեր կարող են վտանգվել:
- Բերվում են Կանադայի ու Ավստրալիայի օրինակները, որտեղ, առանց ոլորտը վնասելու, մինչև 2027 թ. հանքարդյունաբերության ոլորտի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի նկատմամբ նվազեցվելու է 50 %-ով բազմաթիվ նորարարությունների, գերժամանակակից սարքավորումների և ենթակառուցվածքների, օրենսդրական կարգավորումների շնորհիվ:

Դերեր և նկարագրություն

Կառավարություն

- Կառավարություն–1. Դուք ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալն եք հողերի, ջրերի, կենսառեսուրսների կառավարման գծով: Առաջարկվող փոփոխության հեղինակն եք, որը համոզիչ ներկայացնում և համառորեն պաշտպանում է նախարարության կողմից Հայաստանի կանաչ, կայուն զարգացման 50-ամյա ռազմավարության մեջ կարևոր տեղ զբաղեցնող այս փոփոխությունը: -1 հոգի
- Կառավարություն-2. Դուք ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հողերի և ընդերքի քաղաքականության վարչության ներկայացուցիչն եք, առաջարկվող փոփոխության համահեղինակը, որն աջակցում է նախարարության կողմից Հայաստանի կանաչ, կայուն զարգացման 50-ամյա ռազմավարության մեջ կարևոր տեղ զբաղեցնող այս փոփոխությունը պաշտպանող իր գործընկերոջը: -1 հոգի
- Կառավարություն-3. Դուք ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ներդրումային ծրագրերի վարչության ներկայացուցիչն եք, որը դեմ է առաջարկվող փոփոխությանը: Դուք ակտիվորեն ներկայացնում եք ամբողջ նախարարության մտավախությունները, հնարավոր հաշվարկները, որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ մի շարք տնտեսվարողների, ներդրողների շահերի վրա: -2 հոգի

Ազգային ժողով

- Ազգային ժողով–1. Դուք ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի ընդդիմադիր անդամ եք, որը դեմ է առաջարկվող փոփոխությանը: Ձեր պատգամավորական մանդատը ստանալուն օժանդակել են բազմաթիվ հայ

գործարարներ, և նրանք Ձեր գործունեության հետ հսկայական հույսեր են կապում: -1 հոգի

- Ազգային ժողով–2. ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի ընդդիմադիր անդամ եք, որը դեմ է առաջարկվող փոփոխությանը: Ըստ Ձեզ՝ առաջարկվող փոփոխությունը պատշաճ կերպով քննարկված չէ բոլոր շահագրգիռ կողմերի հետ, մշակված է հապշտապ կերպով և ենթակա է վերանայման՝ արտահայտելով հանձնաժողովի անդամ պատգամավորների մեծամասնության դիրքորոշումը: -1 հոգի

- Ազգային ժողով–3. Դուք ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի իշխանական խմբակցության պատգամավոր եք, որը պաշտպանում է առաջարկվող փոփոխությունը, և հատկապես կարևորում եք կայուն գյուղատնտեսության, առողջարանային զբոսաշրջության ոլորտներում Հայաստանի զարգացումը՝ ի հաշիվ հանքարդյունաբերության ոլորտի: -2 հոգի

Դատական

- Դատարան–1. Դուք Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականն եք, որը պետք է համակարգի առաջարկվող փոփոխությանը իրավական գնահատական տալու աշխատանքը: Բնականաբար, ուշադրություն եք դարձնում, թե առաջարկվող փոփոխությունը որքանով է համահունչ կամ հակասող Հայաստանի մայր օրենքին՝ Սահմանադրությանը: Դուք համագործակցում եք Միջազգային պայմանագրերի բաժնի ներկայացուցչի հետ: Ամբողջ ընթացքում չափազանց բարեկիրթ եք, չեզոք և իրավականության դաշտում եք մնում՝ փորձելով կողմերին առաջարկել լավագույն լուծումը: -1 հոգի

- Դատարան-2. Դուք ՍԴ Միջազգային պայմանագրերի բաժնի ներկայացուցիչն եք, որը պետք է մասնակցի առաջարկվող փոփոխությանը իրավական գնահատական տալու աշխատանքին: Դուք հիմնականում ուշադրություն եք դարձնում, թե առաջարկվող փոփոխությունը որքանով է հակասում կամ համահունչ գործարարության, ներդրումների, կոռուպցիայի վերացման ուղղությամբ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին: Դուք համագործակցում եք Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականի հետ: Ամբողջ ընթացքում չափազանց զուսպ եք, չեզոք և իրավականության դաշտում եք մնում՝ փորձելով կողմերին առաջարկել լավագույն լուծումը: -2 հոգի

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-1. Դուք «Հայ էկոիրավապաշտպանների ասոցիացիա» բնապահպանական ՀԿ-ի ամենաակտիվ

կամավորներն եք և տևական ժամանակ է, ինչ պայքարել եք, որպեսզի Կառավարությունը վերջապես հանդես գա այս օրենքի փոփոխության առաջարկով: Այս հիմնախնդիրը Ձեզ համար ոչ միայն սկզբունքի հարց է, այլև ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության: Դուք սերտորեն կապ եք պահում ՔՀԿ ոլորտի մյուս դերակատարների հետ, ինչպես նաև սատարում եք ՀՀ ՇՄՆ ներկայացուցիչներին: -2 հոգի

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-2. Դուք աշխատում եք «Առողջ և երջանիկ մանկություն» հիմնադրամում որպես ծրագրերի պատասխանատու: Դուք տիրապետում եք մի շարք փաստերի, հավաքել եք այս փոփոխության ընդունմամբ շահագրգռված բազմաթիվ քաղաքացիների կարծիքներն ու հավանությունները: Թեպետ հասկանում եք, որ առողջ ու երջանիկ մանկության համար ծնողները պետք է ապահովված լինեն բավարար աշխատավարձով և կարևորում եք երկրի տնտեսության վիճակը, այնուամենայնիվ, պայքարում եք հանուն կայուն, կանաչ պետություն ունենալու: -2 հոգի

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-3. Դուք «Առևտրի և արդյունաբերողների շահերի պաշտպանության պալատի» նախագահն եք: Ձեզ համար կարևոր են Հայաստանում գործարարությամբ զբաղվողների շահերի և իրավունքների հարգումը, նրանց գործունեությանն աջակցելը (հատկապես սահմանային բնակավայրերում) որպես երկրի սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման անկյունաքար: -2 հոգի

Մեդիա

- Ազատվածային լրատվամիջոց–1. Դուք լրագրող եք, որն աշխատում է «Համասփյուռ» ընդդիմադիր լրատվական գործակալությունում: Անկախ նրանից, թե Հայաստանում ինչ իշխանություն է, դուք հարում եք միմիայն ընդդիմադիր հայացքների, ինչպես նաև ակտիվորեն լուսաբանում եք միայն նրանց, ովքեր հակադրվում են գործող իշխանության ներկայացուցիչներին և նրանց առաջարկած փոփոխություններին: Ամբողջ խաղի ընթացքում պահպանում եք լրագրողական էթիկան, չեք վիրավորում ոչ մի խաղացողի և հարգում եք դիմացինի կարծիքը: - 3 հոգի

- Ազատվածային լրատվամիջոց–2. Դուք լրագրող եք, որն աշխատում է «Հետաքննիր ճշմարտությունը» համացանցային լրատվամիջոցում: Դուք հիմնականում երկու կողմերին էլ չեզոք եք լուսաբանում, նրանց աշխատանքները հանրայնացնում և լսելի եք դարձնում մյուս խաղացողներին: Ձեզ համար ամենակարևորը քաղաքացու լսելի և տեղեկացված լինելու իրավունքը սպասարկելն է: Ամբողջ խաղի ընթացքում պահպանում եք լրագրողական էթիկան, չեք վիրավորում ոչ մի խաղացողի և հարգում եք դիմացինի կարծիքը: -3 հոգի

Դերը	Հանձնարարությունը	Արդյունքը	Տրամադրումը
Կառավարություն-1	Դուք մշակում եք Ա4 չափի 1 էջի սահմանում որոշման նախագիծը հիմնավորող փաստարկների տեքստը, որտեղ հնարավորինս պարզ նկարագրում եք, թե ինչ դրական ազդեցություն է ունենալու որոշման նախագիծը հողերի, ջրերի, կենսառեսուրսների նկատմամբ: Ձեր տեքստը համադրում եք ՀՀ ՇՄՆ ձեր գործընկերոջ գրած տեքստի հետ: Դուք խորհրդակցում եք ՀՀ ԱԺ իշխանական պատգամավորի հետ ձևակերպումներին ավելի իրավական տեսք հաղորդելու նպատակով:	Մինչև 1-էջանոց ելույթի գրավոր տեքստ	Ուղարկում եք ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ԱԺ-ի դերակատարներին Տարածում եք ՁԼՄ-ներով Հանդիպում եք ՀՀ ԱԺ իշխանական պատգամավորի հետ
Կառավարություն-2	Դուք մշակում եք Ա4 չափի 1 էջի սահմանում որոշման նախագիծը հիմնավորող փաստարկների տեքստը, որտեղ հնարավորինս պարզ նկարագրում եք, թե որքան կարևոր է այս որոշման նախագիծը հողերի և ընդերքի ռեսուրսների կայուն կառավարման համար՝ մտածելով հետագա սերունդների մասին: Ձեր տեքստը համադրում եք ՀՀ ՇՄՆ ձեր գործընկերոջ գրած տեքստի հետ: Դուք խորհրդակցում եք ՀՀ ԱԺ իշխանական պատգամավորի հետ՝ իրավական առումով ավելի գրագետ ձևակերպումներ անելու նպատակով:	Մինչև 1-էջանոց ելույթի գրավոր տեքստ	Ուղարկում եք ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ԱԺ-ի դերակատարներին Տարածում եք ՁԼՄ-ներով Հանդիպում եք ՀՀ ԱԺ իշխանական պատգամավորի հետ
Կառավարություն-3	Մշակում եք ամբողջ Էկոնոմիկայի նախարարության անունից դիրքորոշման տեքստը, որում թվարկում եք առաջարկվող փոփոխությանն դեմ բոլոր փաստարկները՝ խորհրդակցելով ՀՀ ԱԺ ընդդիմադիր պատգամավորների հետ:	Մինչև 1-էջանոց դիրքորոշման տեքստ	Ուղարկում եք ՀՀ ՇՄՆ-ի, ԱԺ-ի մյուս դերակատարներին Տարածում եք ՁԼՄ-ներով
Ազգային ժողով-1	Տեսաձայնագրում եք կարճ տեղեկատվական տեսանյութ, որում ներկայացնում եք Ձեր հակընդդեմ կարծիքը՝ բերելով համաշխարհային հանքարդյունաբերական դրական փորձի մասին հակիրճ փաստեր, համագործակցում եք ԱԺ-2-ի հետ, խորհրդակցում եք ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ:	1-1.5-րոպեանոց տեսանյութ	Ուղարկում եք ՀՀ ՇՄՆ և էկոնոմիկայի, ԱԺ-ի մյուս դերակատարին. Տարածում եք ՁԼՄ-ներով

Ազգային ժողով-2	Տեսաձայնագրում եք կարճ տեղեկատվական տեսանյութ, որում ներկայացնում եք ձեր հակընդդեմ կարծիքը՝ բերելով համաշխարհային հանքարդյունաբերական դրական փորձի մասին հակիրճ փաստեր, համագործակցում եք ԱԺ-1-ի հետ, խորհրդակցում եք ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ:	1-1.5-րոպեանոց տեսանյութ	Ուղարկում եք ՀՀ ՇՄՆ և էկոնոմիկայի, ԱԺ-ի մյուս դերակատարին Տարածում եք ՁԼՄ-ներով
Ազգային ժողով-3	Հրապարակում եք Ձեր ղեկավարած հանձնաժողովի հրատապ նիստի արձանագրությունը, որով պաշտպանվում է որոշման նախագիծը: Խորհրդակցում եք ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:	Մինչև 1-էջանոց մամլո հաղորդագրություն	Ուղարկում եք ՀՀ ՇՄՆ և էկոնոմիկայի, ԱԺ-ի մյուս դերակատարներին, տարածում եք ՁԼՄ-ներով
Դատարան-1	Մշակում եք ՀՀ ՇՄՆ առաջարկած որոշման նախագծի սահմանադրականության մասին եզրակացություն:	Մինչև 2-էջանոց մամլո հաղորդագրություն	Ուղարկում եք թե՛ ՀՀ ՇՄՆ, թե՛ ՀՀ էկոնոմիկայի, թե՛ ԱԺ-ի դերակատարներին
Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-1	Կազմակերպում եք հանրային իրազեկման արշավ՝ ի պաշտպանություն մետաղական հանքարդյունաբերությունից տուժած բնակիչների իրավունքների: Համագործակցում եք ՔՀԿ-2-ի հետ: Հանրային իրազեկման մասին մեդիանյութերը հրապարակում եք ՁԼՄ-2-ի միջոցով:	Մինչև 1-էջանոց հայտարարության տեքստ և հանրային իրազեկման արշավի 3 մեդիանյութ (պաստառ, նկար, ինֆոգրաֆիկա)	Տարածում եք ՁԼՄ-2-ի միջոցով
Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-2	Կազմակերպում եք հանրային իրազեկման արշավ՝ ի պաշտպանություն մետաղական հանքարդյունաբերությունից տուժած բնակիչների իրավունքների: Համագործակցում եք ՔՀԿ-1-ի հետ: Հանրային իրազեկման մասին մեդիանյութերը հրապարակում եք ՁԼՄ-2-ի միջոցով:	Մինչև 1-էջանոց հայտարարության տեքստ և հանրային իրազեկման արշավի 3 մեդիանյութ (պաստառ, նկար, ինֆոգրաֆիկա)	Տարածում եք ՁԼՄ-2-ի միջոցով
Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-3	Կազմակերպում եք գործարար շահերի պաշտպանության համաժողով՝ վերջում հավաքելով պալատին անդամակցողների կողմից ստորագրություններ՝ ընդդեմ առաջարկվող փոփոխության: Տեքստն ուղարկում եք ՀՀ ՇՄՆ-ին: Համաժողովը լուսաբանելու համար հրավիրում եք ՁԼՄ-1-ին:	Համաժողովի արձանագրության 1-էջանոց տեքստ	Տարածում եք ՁԼՄ-1-ի միջոցով

Զանգվածային լրատվամիջոց-1	Լուսաբանում եք ընդդիմադիր պատգամավորների գործողությունները, ՔՀԿ-3-ի համաժողովը:	ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշման տեքստի տարածում ԱԺ-1-ից և ԱԺ-2-ից հարցազրույց. ԱԺ-1-ի և ԱԺ-2-ի 1-1.5-րոպեանոց տեսանյութի տարածում ՔՀԿ-3-ի համաժողովի արձանագրության տարածում:	Տարածում եք բոլոր դերակատարների շրջանում
Զանգվածային լրատվամիջոց-2	Լուսաբանում եք ՔՀԿ-1-ի և ՔՀԿ-2-ի հանրային իրազեկման գործողությունները, նրանցից ձայնագրում եք կարճատև փոդքասթ:	ՀՀ ՇՄՆ-ի որոշման նախագծի հրապարակում. ԱԺ-3-ի մամլո հաղորդագրության տարածում. ՔՀԿ-1 և ՔՀԿ-2-ի հետ մինչև 2-րոպեանոց փոդքասթ:	Տարածում եք բոլոր դերակատարների շրջանում

Ամփոփիչ քննարկման հարցեր

Գործընթացի վերաբերյալ

- Ինչպիսի՞ն է գործընթացից/խաղից ընդհանուր տպավորությունը:
- Ինչպե՞ս էր խումբն աշխատում նախապատրաստական հատվածում, ինչպե՞ս էր աշխատում խաղի ընթացքում:
- Ինչպե՞ս էիք պատկերացնում դերերը և նրանց անելիքները: Որտեղի՞ց էիք քաղում այդ տեղեկությունները: Խաղի ընթացքում դերի մասին պատկերացումը փոխվե՞ց արդյոք և ինչպե՞ս:
- Ինչպե՞ս էին ընդունվում որոշումները, ընտրվում անելիքները, բաշխվում դերերը:
- Ինչպե՞ս էր կառուցվում այլ դերակատարների հետ աշխատանքը, ինչպե՞ս էին միմյանց հետ շփվում առկա դերակատարները, ինչպե՞ս էր այդ շփումն ազդում խաղի ընթացքի և, ի վերջո, արդյունքների վրա:
- Որո՞նք էին աշխատանքում ի հայտ եկող հիմնական բարդությունները, և ինչպե՞ս էին դրանք հաղթահարվում:
- Ի՞նչն էր օգնում հաղթահարել ի հայտ եկած խնդիրները:

- Ինչպե՞ս էին ընտրվում աշխատանքի ուղղվարությունն ու տեսակետը առաջ տանելու ֆայլերը:
- Հետադարձ հայացք գցելով՝ ի՞նչ որոշումներ կամ գործողություններ կվերանայեիք Ձեր դերակատարումը մեծացնելու համար:

Թեմայի վերաբերյալ

- Ինչի՞ մասին էր այս խաղը Ձեզ համար:
- Ինչպե՞ս է խաղը խորացրել Ձեր պատկերացումները ժողովրդավարական գործընթացների և որոշումների կայացման մեխանիզմների վերաբերյալ:
- Որքանո՞վ էր խաղը արտացոլում իրական կյանքը, ինչպե՞ս, կապեր տեսա՞ք ձեր համայնքի հետ:
- Ի՞նչ հիմնական դասեր քաղեցիք խաղին մասնակցությունից:
- Որո՞նք են Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող Ձեր ամենամեծ բացահայտումները խաղի շնորհիվ:
- Խաղից հետո դիտարկու՞մ եք արդյոք բնապահպանության բնագավառում մասնագետ դառնալը:

Ապագա քայլերի շուրջ

- Ի՞նչ հետագա ֆայլեր կարող եք ձեռնարկել խաղից ստացած գիտելիքները խորացնելու և առկա հիմնախնդիրն իրական կյանքում լուծելու համար:
- Ինչպե՞ս կարող եք օգնել Ձեր համակակիցներին՝ ավելի լավ պատկերացնելու ժողովրդավարական գործընթացների էությունը:
- Մտածեք մեկ կոնկրետ ֆայլի մասին, որ կանեք անմիջապես խաղի ավարտից հետո՝ ամրապնդելու խաղից ստացած Ձեր արդյունքները կամ ավելի զարգացնելու Ձեր որոշակի հմտությունները:

ՕԳՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագիր

ՀՀ ներդրումային քաղաքականության մասին պաշտոնական փաստաթղթեր

ՀՀ-ում լքված պոչամբարների մասին հոդված

Կանադայի և Ավստրալիայի հանքարդյունաբերության ոլորտի մասին հոդված

ԿՐԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

1. Պատմական զարգացումը և հիմնական նշանակությունը

Իրավական պետության կառուցման գործընթացում կարևոր նշանակություն ունի տվյալ պետության գոյատևման պայմաններին առավել համապատասխանող պետական կառավարման մոդելի ընտրությունը: Բացառություն չէ Հայաստանի Հանրապետությունը: 1991 թվականից մինչ օրս պետական կառավարման մոդելն այստեղ ենթարկվել է էական փոփոխությունների: Հետաքրքրական է այն փաստը, որ ՀՀ-ում անկախությունից ի վեր փորձարկվել են կառավարման հանրապետական մոդելի բոլոր երեք ձևերը՝ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական: Կառավարման ձևով պայմանավորված՝ օրենսդիր մարմնի (Ազգային ժողով) ձևավորման, լիազորությունների, գործառույթների շրջանակը տարբեր է եղել:

2013-ից մեկնարկեց սահմանադրական նոր փոփոխությունների գործընթացը: Սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ-ում հաստատվեց լիարժեք կոլեգիալ (համատեղ) խորհրդարանական (պառլամենտական) կառավարման համակարգ, որի պաշտոնական հիմնավորումներից հետևում է, որ այդպիսով պետական կառավարման նախորդ ձևերի հայաստանյան մոդելներն անարդյունավետ են համարվել:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո պետական իշխանության համակարգում առաջնային մանդատ ունեցող միակ մարմինը Ազգային ժողովն է: Այս հանգամանքով են պայմանավորված Ազգային ժողովի իրավական կարգավիճակի էական գծերը, ինչպես նաև այդ մարմնի կենտրոնական տեղը և վճռորոշ դերը պետական համակարգում:

Խորհրդարանական կառավարման հաստատումից հետո իշխանության կենտրոնում խորհրդարանն է (Ազգային ժողով): Միայն Ազգային ժողովն է ձևավորվում համընդհանուր ընտրությունների միջոցով, հետևաբար ունի լեգիտիմության առավել բարձր մակարդակ: Այն ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Պետական իշխանության մյուս բոլոր կառույցները, այդ թվում՝ կառավարությունը, ձևավորվում են խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ:

Բացի օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու և հաստատելու գործառույթից՝ խորհրդարանն ունի նաև կազմակերպչական և վերահսկողական ծավալուն գործառույթներ: Կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի, այլ ոչ թե նախագահի առջև, և հրաժարական է տալիս խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու դեպքում: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում իրական բովանդակություն ստացավ Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունը. կառավարությանը կամ վարչապետին անվստահություն հայտնելու դեպքում հրաժարականին այլընտրանք սահմանված չէ:

Ազգային ժողովն ընդունում է պետական բյուջեն և իրականացնում Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Ազգային ժողովի մարմիններն են պատգամավորները, Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները, խմբակցությունները, հանձնաժողովները և Ազգային ժողովի խորհուրդը:

Մշտական հանձնաժողովները ստեղծվում են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար: Համապատասխան որոշմամբ կարող են ձևավորվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ:

Սույն ձեռնարկի մշակման ընթացքում Հայաստանի Ազգային ժողովի վերջին ընտրություններն եղել են 8-րդ գումարման արտահերթ ընտրությունները, որոնք տեղի ունեցան 2021 թվականի հունիսի 20-ին: Ընտրություններն անցկացվեցին համամասնական ընտրական համակարգով: Հայաստանի Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվեց 5 տարի ժամկետով և ունի առնվազն 101 պատգամավոր: Ըստ օրենսդրական կարգավորումների՝ խորհրդարանում ներգրավվեց առնվազն երեք ուժ: Ներկա 8-րդ գումարման խորհրդարանում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ունի 72 մանդատ, ընդդիմադիր «Հայաստան» դաշինքը (27 մանդատ) և «Պատիվ ունեմ» (6 մանդատ) դաշինքը միասին ունեն 33 մանդատ:

2. Ոլորտի կարգավորումը

1. ՀՀ Սահմանադրություն (առ 2020 թ. հունիսի 22-ի փոփոխություններով): Սահմանադրության 4-րդ գլուխը վերնագրված է ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ: Մայր օրենքը՝ 88-րդից մինչև 122-րդ հոդվածը ներառյալ, սահմանում է ԱԺ լիազորությունները, կարգավիճակը, կազմը, ընտրության կարգը և այլն: Սահմանադրությունից են բխում նաև ոլորտի այլ օրենսդրական կարգավորումներ:

2. Ազգային ժողովի կանոնակարգ (առ 2023 թվականի հոկտեմբերի 25-ի փոփոխություններով): ԱԺ կանոնակարգը բաժիններով մանրամասն անդրադառնում է ԱԺ և դրա կազմի գործառույթներին, հստակ սահմանում ընթացակարգերը և այլն: Բաժին 4-ում մանրամասն անդրադարձ է կատարվում ԱԺ որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունման գործընթացին:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին ՀՀ օրենք: Օրենքը մանրամասն անդրադառնում է պետական ծառայության պաշտոն զբաղեցնելուն, պետական ծառայողների ատեստավորմանը, խրախուսմանը և այն: Սույն օրենքի ուսումնասիրությունը հնարավորություն կտա մարամասն ծանոթանալ ԱԺ-ում աշխատելու մասին (Գլուխ 3. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելը):

4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին օրենքի հոդված 7, որով սահմանվում է քաղաքացիների հետ պատգամավորի ընդունելության կազմակերպումը, ասվում է, որ Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելության կազմակերպման համար:

3. Ոլորտի գործիքարանը

Ազգային ժողովը, լինելով իշխանության երեք թևերից միակը, որն ընտրվում է ուղիղ ընտրությունների միջոցով, ժողովրդավարության պայմաններում ներկայացնում է տվյալ հասարակության խնդիրները, իրականացնում է բարեփոխումներ օրենսդրական դաշտում՝ ոլորտներում ստեղծելով բարենպաստ պայմաններ պետության կայուն զարգացումն ապահովվելու համար:

Ազգային ժողովը հասարակության հետ աշխատում է հետևյալ գործիքներով.

1. **Խորհրդարանական լսումներ**. Ազգային ժողովում լսումները ժողովրդավարական և թափանցիկ քաղաքական գործընթացների պահանջ են: Խորհրդարանական լսումները հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկման, տեղեկությունների հավաքման և տարածման մեխանիզմ են, որոնց խորհրդարանը մասնակից է դարձնում հասարակության լայն շերտերին: Լսումների հրավիրման մասին որոշումը տեղադրվում է նաև Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ լսումների վերաբերյալ տեղեկատվությունը լսումների անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային

օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին: Հանրային իրազեկվածության և թափանցիկության ապահովման համար սահմանված է, որ խորհրդարանական լսումներն առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: (ԱԺ կանոնակարգ, հոդված 125)

2. **Հանրագրերը՝ որպես խորհրդարանական վերահսկողության գործիք**. Հանրագիրը ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունն է: Հանրագրերը լուծում են ժողովրդավարական գործընթացներում հանրության ներգրավման խնդիրը: Հանրագրերի միջոցով կապ է ստեղծվում քաղաքացու և օրենսդիրի միջև: Օգտագործելով հանրագրերի ինստիտուտը՝ քաղաքացին կարող է կապի մեջ մտնել իշխանության հետ՝ խուսափելով բյուրոկրատական քաշքշուկներից, և լսելի դարձնել իր խնդիրը: Հանրագրերի ինստիտուտի կիրառման արդյունքում կարող է շտկվել նաև կոնկրետ հարցի վերաբերյալ տարվող քաղաքականությունը: Հանրագրեր ներկայացնելու իրավունքը Սահմանադրությամբ վերապահված է յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ իրավաբանական անձանց: («Հանրագրերի մասին» օրենք)

3. **Հրատապ թեմայով քննարկումներ.** Հրատապ թեմայով քննարկումների ինստիտուտը խորհրդարանական վերահսկողության մեկ այլ կարևոր գործիք է, ինչի շնորհիվ այն ամրագրված է օրենքով: Հրատապ թեմաներով քննարկումներն, առաջին հերթին, խորհրդարանական փոքրամասնության գործիք են: Այս քննարկումները պետք է ծավալվեն հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Սակայն, բացի հասարակական հետաքրքրության պահանջից, նորմը հուշում է, որ քննարկման թեման պետք է լինի նաև հրատապ, այսինքն՝ խիստ կարևոր, անհետաձգելի: Քննարկումների վերջում զեկուցողը կարող է առաջարկել ընդունել Ազգային ժողովի ուղերձ կամ հայտարարություն, որոնք առավելապես քաղաքական գործիքներ են: (ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդված, ԱԺ կանոնակարգի 123-րդ հոդված)

4. **Պատգամավորների հետ քաղաքացիների հանդիպում**. Այս նախաձեռնությունը կարող է բխել ինչպես «վերևից», այնպես է «ներքևից»: Այս մեխանիզմն առավել արդյունավետ աշխատում է մեծամասնական ընտրական համակարգի դեպքում, երբ տարածքային մակարդակում կա ներկայացուցիչ պատգամավոր, և տեղի բնակիչները գիտեն թե ով է իր լիազոր ներկայացուցիչը ԱԺ-ում, և ում կարող են իրենք հասցեական դիմել:

5. **ԱԺ հանձնաժողովի քննարկումներին ընդգրկվածություն**. Արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ԱԺ կանոնակարգը մշտական հանձնաժողովների համար նախատեսում է նաև պաշտոնատար անձանց հրավիրելու և լսելու իրավասություն: Հանձնաժողովներին իրավասություն է վերապահվում խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, համապատասխան մասնագետների, ոլորտային ներկայացուցիչների: Աշխատանքներում կարող են ընդգրկված լինել նաև ՔՀԿ ներկայացուցիչները:

Սահմանադրական փոփոխություններից հետո ԱԺ-ի աշխատանքային հիմնական գործիքակազմում ընդգրկված են նաև վերահսկողության հետևյալ գործիքները.

6. **հարցապնդումները**

7. **պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը.**

8. **տարեկան հաղորդումների ներկայացումը:**

4. Լրացուցիչ հղումներ

- ԱԺ պաշտոնական կայքէջ՝ http://www.parliament.am
- ԱԺ ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/parliament.am
- ԱԺ ինսթագրամյան էջ՝
- https://www.instagram.com/parliament_of_armenia/?fbclid=IwAR3rgxZi93gmqTXLoKUCfLeS9mvCCNBYUPKg240FdO01WmgWeLspc-tMvqs
- Թելեգրամյան ալիք՝ t.me/parliament_armenia
- Ազգային ժողովի նախագահին, պատգամավորներին, հանձնաժողովներին և խմբակցություններին ուղղված էլեկտրոնային նամակ գրելու հարթակ՝ http://www.parliament.am/feedback.php?lang=arm
- «Խորհրդարանական վերահսկողություն. Գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» գիրք, Սարգսյան Ն., Ավետիսյան Հ., Օդաբաշյան Հ., https://www.luys.am/img/artpic/small/856a815aeb1803c66615aխորհրդարանականվերահսկողություն_Final.pdf
- ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն, Վերջնական զեկույց, ԱԺ, 2021 թ. ընտրությունների մասին, https://res.elections.am/images/doc/OCSE20.06.21.pdf

2. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Պատմական զարգացումը և հիմնական նշանակությունը

ՀՀ-ում անկախությունից ի վեր կառավարման համակարգում կիրառվել են հանրապետական կառավարման մոդելի առկա երեք ձևերը՝ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական, որոնց շրջանակներում Կառավարության դերը և գործառույթները փոխվել են:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով երկրում հաստատվեց կառավարման խորհրդարանական համակարգ: Կառավարության գործառույթների և լիազորությունների կտրուկ ընդլայնման արդյունքում Կառավարությունը հանդես է գալիս որպես պետության արտաքին և ներքին քաղաքականությունը մշակող և իրացնող, սահմանադրական կարգի պահպանումը և երկրի պաշտպանությունն ապահովող հիմնական պետական մարմին: Կառավարությունը Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով, կառավարում է պետական սեփականությունը, իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը, իրականացնում է տարածքային զարգացման պետական քաղաքականությունը, իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում, ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ:

Կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի, այլ ոչ թե նախագահի առջև և հրաժարական է տալիս խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու դեպքում: Միևնույն ժամանակ, ունենալով խորհրդարանի մեծամասնության օժանդակությունը, Կառավարությունը հնարավորություն ունի էականորեն ազդել խորհրդարանի գործունեության, առաջին հերթին՝ օրենսդրական գործունեության վրա:

Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

Նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով: Փոխվարչապետների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ նախարարներինը՝ տասնութը: Սույն ձեռնարկի մշակման պահին գործում է 12 նախարարություն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Արդարադատության, Արտաքին գործերի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Էկոնոմիկայի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Ներքին գործերի, Շրջակա միջավայրի, Պաշտպանության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Ֆինանսների: Նախարարություններին կից գործում են դրանց ենթակա մարմինները: Օրինակ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն ենթակա մարմին է Զբոսաշրջության կոմիտեն: Վարչապետը և Կառավարությունը ևս ունեն իրենց ենթակա մարմիններ՝ ծառայություններ, կոմիտեներ, օրինակ՝ Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանություն, Վիճակագրական կոմիտե, Պետական եկամուտների կոմիտե և այլն: Մարզերում որպես Կառավարության ներկայացուցիչ հանդես է գալիս մարզպետի աշխատակազմը:

2. Ոլորտի կարգավորումը

Ոլորտը կարգավորող փաստաթղթեր

1. ՀՀ Սահմանադրություն (առ 2020թ. հունիսի 22-ի փոփոխություններով): Սահմանադրության 6-րդ գլուխը վերնագրված է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: Սահմանադրության 146-րդ հոդվածից մինչև Հոդված 161-ը ներառյալ սահմանվում են Կառավարության գործառույթները, կարգավիճակը, կառուցվածքը, վարչապետի և Կառավարության իրավասությունները:

2. Հայաստանի Հանրապետության օրենքը Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին (ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին): Սույն օրենքը մանրամասն սահմանում է Կառավարության կազմավորման կարգը, ժամկետները, անդամների իրավասությունները, Կառավարության նիստերի, որոշումների կայացման կարգը և այլն: Սույն օրենքին կցված է հավելված, որում նշված են նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները:

3. ՀՀ նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը: Սույն կարգով սահմանվում են Կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքները, Կառավարության գործունեության կազմակերպման, նիստերի նախապատրաստման, հրավիրման, որոշումների ընդունման և դրանց կատարման ապահովման կարգը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր: Ծրագիրը ծավալուն և շատ կարևոր փաստաթուղթ է, որում տրամաբանական աղյուսակով և շարադրանքով ներկայացված են բոլոր նախարարությունների և Կառավարությանը ենթակա կառույցների նպատակը, միջոցառումները, ակնկալվող արդյունքները և այլն:

3. Ոլորտի գործիքարանը

Կառավարության քաղաքականությանը, գործունեությանը, նրան ենթակա մարմիններին մենք առնչվում ենք անմիջականորեն: Ոստիկանություն, առողջապահական համակարգ,

կրթության ոլորտ և այլն՝ ժամանակակից մարդու կյանքի անբաժանելի մասն են: Ի տարբերություն օրենսդիր մարմնի՝ Կառավարությունը մշտապես անմիջական կապի մեջ է նախարարությունների հետ: Մենք մեր ամեն քայլափոխին առնչվում ենք Կառավարության ծրագրերի և որոշումների հետ: Որպեսզի քաղաքացու հետ աշխատանքը առավել արդյունավետ ու արագ լինի, ՀՀ կառավարությունը անցում է կատարել կառավարման էլեկտրոնային համակարգի:

1. **Ծրագրերի իրականացում**. Կառավարության ամբողջ գործունեությունը հենված է նրա ներկայացրած ծրագրի վրա, որը շատ ընդգրկուն է: Կառավարության ծրագրում առանձին ներկայացված են յուրաքանչյուր նախարարության, դրանց ենթակա մարմինների ծրագրերը, որոնք առնչվում են բոլորիս: Բացի ներկայացված խոշոր ծրագրից՝ Կառավարությունը իրականացնում է ընթացիկ այլ ծրագրեր, որոնք բխում են Կառավարության բուն ծրագրից: Կից կարող եք ծանոթանալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը» փաստաթղթին՝ https://www.gov.am/files/docs/5145.pdf :

2. **Էլեկտրոնային կառավարում** (https://www.e-gov.am). Կայքի միջոցով քաղաքացին կարող է անմիջականորեն նամակ գրել Կառավարությանը և նրան առընթեր մարմիններին, հետևել դրա ընթացքին, իրականացնել կազմակերպությունների էլեկտրոնային գրանցում, ստանալ էլեկտրոնային վիզա և այլն: Մեխանիզմը դյուրացնում է մի շարք գործողություններ, որոնք նախկինում մարդուց շատ ժամանակ էին խլում:

3. **Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ** (ՀՀ արդարադատության նախարարություն, https://azdararir.am/am). Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազդարարը կարող է անանուն եղանակով հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն դեպքի մասին: Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ-ն՝ ի դեմս Արդարադատության նախարարության, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Այս առումով հարկ է նշել, որ անանուն ազդարարումը համարվում է ազդարարների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկը, քանի որ վերջինս ապահովում է ազդարարների վստահությունը իրենց անձնական տվյալների պաշտպանության համար՝ հաշվի առնելով դրանց անհայտ լինելը ինչպես երրորդ անձանց, այնպես էլ պետական իրավասու մարմինների համար:

4. **Նամակներ, գրություններ, դիմումներ և այլն**. Քաղաքացին, կազմակերպությունները իրավունք ունեն իրենց հուզող ցանկացած խնդրի, հարցի վերաբերյալ դիմել Կառավարությանը և սահմանված ժամկետում ստանալ պատասխան:

5. **Կառավարության որոշումներ**. Այս մեխանիզմով Կառավարությունը աշխատում է օրենսդիր մարմնի հետ: Օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ որոշումները և Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Կառավարության անդամների ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ:

4. Լրացուցիչ հղումներ

- Կառավարության պաշտոնական կայքէջ՝ https://www.gov.am/am/#
- Կառավարության ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/armgovernment/
- Գործադիր իշխանության լիազորությունների տարանջատման և ապակենտրոնացման արդյունավետության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հետազոտություն.

- http://dspace.paara.am/xmlui/bitstream/handle/123456789/116/Վարդանյան%20Սեդա.pdf?sequence=1&isAllowed=y
- Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն.
- https://etd.nla.am/4403/1/Atenaxosutyun_Alexander_Harutyunyan.pdf

3. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Պատմական զարգացումը և հիմնական նշանակությունը

Դատաիրավական բարեփոխումները ՀՀ-ում սկսվելեն անկախացման առաջին հիսկտարիներից և հանդիպել են այնպիսի մարտահրավերների, որոնք բնորոշ են ժողովրդավարության ուղին բռնած թերևս բոլոր երկրներին:

Անցած ժամանակահատվածում բավականին մեծ աշխատանքներ են կատարվել: Ստեղծվել է եռաստիճան դատական համակարգ, դատարանները դարձել են առավել մատչելի, ներդրվել են նոր մեխանիզմներ դատական իշխանության անկախությունն ապահովելու նպատակով: Դատական իշխանությունը պետական իշխանության հատուկ, անկախ մարմիններին՝ դատարաններին պատկանող բացառիկ իրավունքն է՝ հատուկ դատավարական կարգով քննելու իրավական վեճերը օրինականության, մարդու իրավունքների պաշտպանության և վերականգնման նպատակով:

Դատական իշխանության հատկանիշները՝ իշխանությունների տարանջատման համակարգում, հանդիսանում են անկախությունը, ինքնուրույնությունը և առանձնացվածությունը: Իշխանությունների տարանջատման սկզբունքի համաձայն դատական մարմինը, ընդհանուր առմամբ, դերակատարություն չունի օրենքի սահմանման, ամրագրման (որը օրենսդիր մարմնի անմիջական պարտականությունն է) կամ կիրառման (որը գործադիր մարմնի անմիջական պարտականությունն է) գործընթացներում:

Դատարանները գործում են առանց ինչ-որ ենթակայության, օրենքով իրենց տրված լիազորությունների հիման վրա: Դատարանների կայացրած որոշումները անքակտելի են և չունեն ինչ-որ մեկի հաստատման կարիքը: Դատարանի որոշումը, որն օրինական ուժի մեջ է, ենթակա է պարտադիր կատարման բոլորի համար:

Դատական համակարգը չի ենթարկվում և չի հարում պետական իշխանության որևէ այլ համակարգի: Բայց դա չի նշանակում, որ դատական համակարգը ամբողջովին մեկուսացված է այլ իշխանություններից:

Դատական համակարգը պետության բոլոր դատարանների ամբողջությունն է, որը միավորում է ընդհանուր խնդիրներ ունեցող, միասնական սկզբունքներով կազմակերպված և գործող, միմյանց հետ արդարադատության իրականացման հարաբերություններով կապված բոլոր դատարաններին: Հայաստանի Հանրապետության դատարանների ամբողջությունը բաժանվում է երկու ենթահամակարգի՝ Սահմանադրական դատարան և ընդհանուր իրավասության դատարաններ (առաջին, վերաքննիչ, վճռաբեկ ատյանի դատարաններ), մասնագիտացված դատարաններ:

Այս պահին ՀՀ-ում գործում են հետևյալ մասնագիտացված դատարանները՝ վարչական, սնանկության, հակակոռուպցիոն:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության փոփոխություններով սահմանադրի կողմից նախանշվեց նոր անկախ պետական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առանձին հոդվածով հռչակվեց, որ Բարձրագույն դատական խորհուրդը անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ գլխի դրույթներով ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ եռաստիճան դատական համակարգի միջոցով, և որպես այդ գործառույթի անարգել իրականացման երաշխավոր հանդես է գալիս Բարձրագույն դատական խորհուրդը:

Բարձրագույն դատական խորհուրդը կազմավորվում է ժողովրդի ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված՝ մասնագիտական բարձր որակներով օժտված հինգ հեղինակավոր իրավաբան գիտնական անդամից, ինչպես նաև դատական իշխանության ներկայացուցչական մարմնի՝ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված հինգ փորձառու դատավոր անդամից, որոնց ընտրության արդյունքում ապահովվում է բոլոր դատական ատյանների ներկայացվածությունը:

2. Ոլորտը կարգավորող փաստաթղթերը

ՀՀ-ում դատական համակարգը կարգավորվում է հետևյալ օրենսդրական փաստաթղթերով.

1. ՀՀ Սահմանադրություն (առ 2020 թ. հունիսի 22-ի փոփոխություններով): Սահմանադրության 7-րդ գլուխը վերնագրված է ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ: Մայր օրենքը 162-րդից մինչև հոդված 175-րդը ներառյալ սահմանում է դատական համակարգի, բարձրագույն դատական համակարգի լիազորությունները, դատավորների ընտրության, նշանակման կարգը և այլն:

2. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» կառավարության որոշում, ընդունված 2019 թ.: Այս փաստաթուղթը նախանշում է դատական համակարգի այն ոլորտները, որոնցում պետք է բարեփոխումներ արվեն: Դրանցից են էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծումը, սահմանադրական բարեփոխումների անցկացումը, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավումը և այլն:

3. ՀՀ դատական օրենսգիրքը (առ 2018 թվականի փետրվարի 7) կարգավորում է դատական իշխանության կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները՝ բացառությամբ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարցերի:

3. Ոլորտի գործիքարանը

ՀՀ օրենսդրության համաձայն՝ դատական համակարգը մասնակցություն է ունենում հետևյալ գործիքակազմերով՝

- Սահմանադրական դատարանը, համաձայն ՀՀ սահմանադրության և ՀՀ օրենսդրության, մասնագիտական եզրակացություն է տալիս օրենսդրական բոլոր նախագծերին:
- ՀՀ դատական համակարգի մասնակցային արդի գործիքակազմ է ազդարարման առցանց համակարգը, համաձայն որի յուրաքանչյուր ոք անանուն կամ ոչ անանուն եղանակով

կարող է կոռուպցիոն դեպքերի և ոչ միայն այդպիսի դեպքերի վերաբերյալ հաղորդում գրանցել: Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ազդարարը կարող է անանուն եղանակով տեղեկություններ հաղորդել կոռուպցիոն դեպքի մասին: Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ-ն՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: [1]

4. Լրացուցիչ հղումներ

- ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայք՝ https://www.court.am/hy
- ՀՀ դատական օրենսգիրք https://www.arlis.am/documentview.aspx?docid=119531
- Դատական ակտերի և գործերի միասնական տեղեկատվական հարթակ՝ www.datalex.am
- Դատական համակարգի անկախության սահմանադրական հիմքերը, Գիտական աշխատություն, Գագիկ Ղազինյան, ԵՊՀ, 2014
- ՀՀ սահմանադրական օրենքը սահմանադրական դատարանի մասին. https://www.concourt.am/normative-legal-bases/constitutional-law

4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհում պետությունների զարգացման հետագիծը ցույց է տալիս, որ ժողովրդավարացման գործընթացին զուգահեռ առաջ է գալիս քաղաքացիական հասարակության զարգացման և ձևավորման անհրաժեշտությունը: Ներկայիս ժողովրդավարությունը հիմնված է դեռևս Հին Աթենքից (մ.թ.ա. 6-րդ դար) եկող գաղափարի վրա, որը պնդում է, որ հասարակ մարդկանց իրավունքն է՝ մասնակցել իրենց իսկ կյանքին վերաբերող որոշումների կայացմանը: Պետության հայեցակարգի ձևավորմանը զուգընթաց առաջ է գալիս կոլեկտիվ-խմբային շահերի պաշտպանության, նրանց շահերի բարձրաձայնման անհրաժեշտությունը: Դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակից մարդկության պատմության վավերագրության մեջ առկա են հուշումներ, որ գործել են խմբային-կոլեկտիվ հիմքով շահերի և պահանջմունքների, արդարության գաղափարի, ազատությունների և հավասարության վերաբերյալ իրողություններ: Ժամանակակից պատմագրության մեջ կոլեկտիվ շահերի մասին առաջին հիշատակումները վերաբերում են դեռևս տոհմական-ցեղային ժամանակաշրջանին, երբ քարանձավաբնակ մարդկանց շահերի և պահանջմունքների համար ուղղակի կամ անուղղակի պայքարներ են եղել: Հետագայում բավականին բարդ գործընթաց է եղել խմբերի շահերից դեպի ընդհանուրի շահին անցման գործընթացը: Գիտական համատեքստում այս տրանսֆորմացիոն ընթացքը համարում են քաղաքացիական հասարակության ձևավորման առաջին քայլը: Այսօր առկա են քաղաքացիական հասարակության բազմաթիվ հայեցակարգեր և մոտեցումներ, սակայն մինչ օրս գրականության մեջ քաղաքացիական հասարակության համատեքստում օգտագործվում են «քաղաքակիրթ հասարակություն», «իրավական հասարակություն» «ժամանակակից հասարակություն» և այլ հասկացությունները:

Ժողովրդավարության զարգացման առանցքային գործոնը ուժեղ և դինամիկ քաղաքացիական հասարակության գոյությունն է:

Քաղաքացիական հասարակության կառույցներ են հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները, նախաձեռնող խմբերը, արհեստագործական միությունները, սոցիալական

1 https://azdararir.am/am/ - ՀՀ Ազդարարման առցանց համակարգ

միավորումները և միությունները: Քաղաքացիական հասարակության անբաժանելի մաս են այն ոչ ֆորմալ (նախաձեռնող) խմբերը, որոնք չունեն իրավաբանական գրանցում, սակայն տեղական մակարդակում ակտիվ նախաձեռնող խմբեր են:

Ընդունված սահմանման համաձայն՝ հասարակական կազմակերպությունը իրավական կազմակերպություն է, որը ստեղծված է անձանց կամ կազմակերպությունների կողմից՝ առանց կառավարության որևէ մասնակցության: Այս տեսակի կազմակերպություններն անվանվում են նաև լայն տարածում գտած «ոչ կառավարական կազմակերպություն» եզրույթով և ավելի մեծ տարածում գտած ՀԿ հապավմամբ:

Քաղաքացիական հասարակությունը իրավատեր, ազատ, գործուն, պատասխանատու քաղաքացիների և պետությունից հարաբերականորեն անկախ, նրանց կողմից կամովին ձևավորված կազմակերպությունների, կառույցների, միավորումների, աջակցող խմբերի ինքնակառավարման և ինքնահամակարգման վրա հիմնված սոցիալական, տնտեսական և հոգևոր մշակութային հարաբերությունների համակարգ է, որը կոչված է իրականացնելու նրանցից յուրաքանչյուրի և բոլորի շահերն ու պահանջմունքները:

Քաղաքացիական հասարակությունը պետության, քաղաքացիների և շուկայի միջև հանրային տարածություն է, որտեղ մարդիկ կարող են ծավալել քննարկումներ, հարցեր բարձրացնել և նախաձեռնել հանրային միջոցառումներ՝ արշավներ, քննարկումներ, ակցիաներ:

Քաղաքացիական հասարակությունը ոչ կառավարական կազմակերպությունների և կառույցների համակարգ է, քաղաքացիների մասնավոր և հասարակական շահերի, պահանջմունքների միավորման յուրահատուկ ձև, որոնց միջոցով քաղաքացին գործուն մասնակցություն է ունենում հանրային քաղաքականության ձևավորման գործընթացին՝ դրան տալով սոցիալական շեշտադրում:

Քաղաքացիական հասարակությունը կոլեկտիվ կամավոր գործողությունների միջոցով համախմբում է մարդկանց՝ պետական մարմինների ուշադրությունը հրավիրելով հասարակական հնչեղություն ունեցող որևէ խնդրի համ հիմնախնդիրների վրա: Կայացած քաղաքացիական հասարակությունը ազատ շուկայի, մասնավոր սեփականության ընդլայնման և անհատական ազատությունների, պահանջների, շահերի բավարարման գործընթացում նվազեցնում է պետական իշխանական կառույցների ուղղահայաց ազդեցությունը՝ ուժեղացնելով հորիզոնական պատկերը:

Հատկանշական է, որ արդի մեկնաբանություններում նշվում է քաղաքացիական հասարակության կառույցների՝ որպես նախադեպ 19-20-րդ դարերում արհեստագործական միությունների գործունեությունը:

Քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում կարևոր նշանակություն ունեն անհատների, կազմակերպությունների և հաստատությունների հավաքական գործողությունները, որոնք հնարավոր են դարձնում ընդհանուր շահերի պաշտպանությունը: Մասնավորապես, Օրհուսի կոնվենցիայում քաղաքացիական հասարակությունը սահմանվում է որպես գիտակից հանրություն, որն իր ակտիվ մասնակցությամբ հակակշռում և հավասարակշռում է պետական մեքենային:

Հայաստանյան ժամանակակից քաղաքացիական հասարակության միջավայրը ձևավորվել է դեռևս Խորհրդային Միության ժամանակներից: ԽՍՀՄ տարիներին արդեն իսկ առկա էին քաղաքացիական միավորումներ, սակայն վերջիններս գործում էին պետության վերահսկողության տակ և չունեին անկախություն: Հայաստանյան արդի ՔՀԿ միջավայրի ձևավորման անկյունաքարեր են հանդիսացել անկախացման շարժումները, Ղարաբաղյան շարժումները, քաղաքացիական տարբեր շարժումները 2005-2015 թվականներին և 2018 թվականի հեղափոխությունը:

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի 2023 թվականի

տվյալների՝ Հայաստանում գրանցված է քաղաքացիական հասարակության շուրջ 6000 կազմակերպություն, որոնցից ակտիվ են ավելի քան 1000-ը:

2. Ոլորտի կարգավորումը

Քաղաքացիական հասարակության միջավայրը կարգավորվում է հետևյալ նորմերով.

1. Հայաստանի Հանրապետության օրենքը հասարակական կազմակերպությունների մասին՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին.
2. Հայաստանի Հանրապետության օրենքը հիմնադրամների մասին՝ ընդունված 2002 թվականի դեկտեմբերի 26-ին.
3. **Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին նորմերը ամրագրված ՇՄԱԳ օրենքով:**
4. **ՀԿ-ների ընթացիկ գործունեության կարգավորման նորմեր են ներկայացվում ՀՀ հարկային օրենսգրքում, ՀՀ աշխատանքային օրենսգրքում և այլ օրենսդրական փաստաթղթերում:**

3. Ոլորտի գործիքարանը

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի գործունեությունն իրականացվում է որոշակի գործիքակազմերի միջոցով: Դրանք են.

1. Շահերի պաշտպանության շարժումներ, ինչպիսիք են կանանց իրավահավասարության գլոբալ շարժումը, կրոնական փոքրամասնությունների պաշտպանության միջազգային շարժումը, մարդու իրավունքների պաշտպանության ազգային շարժումը և այլն:
2. Սոցիալական-տնտեսական աջակցության տրամադրումը. այս գործիքակազմն առավել կիրառելի է ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածների համար, երբ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն արագ արձագանքի տեսքով սոցիալական-տնտեսական աջակցության ծրագրեր են իրականացնում շահառուների համար:
3. Մարդասիրական աջակցության տրամադրումը ճգնաժամային պայմաններում. այս գործիքակազմի օրինակ են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հրատապ կարիքների արձագանքման նախաձեռնությունները (առաջին անհրաժեշտության պարագաների, սննդի, բժշկական պարագաների, կենցաղային և սանիտարահիգիենիկ միջոցների տրամադրումը և այլն):
4. Կարողությունների զարգացում. քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից օգտագործվող թերևս ամենատարածված գործիքակազմը, որի միջոցով կազմակերպությունները նախաձեռնում են զարգացման տարբեր ծրագրեր, օրինակ՝ փափուկ հմտությունների զարգացման, մեդիագրագիտության, քննադատական մտածողության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման և այլ համալիր ծրագրեր:
5. Որոշումների կայացման գործընթացին մասնակցություն և ազդեցություն որոշումների կայացման գործընթացի վրա. այս գործիքակազմը ենթադրում է թվային և ֆիզիկական մասնակցություն որոշումների կայացման բուն գործընթացին: Թվային արդի տեխնոլոգիաները և համացանցը նոր հնարավորություն են տալիս քաղաքացիական

հասարակության կազմակերպություններին թվային մասնակցության համար: ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ակտիվորեն կիրառվող գործիք է իրավական ակտերի նախագծերի հրապարակման E-draft միասնական համակարգը, որի միջոցով կազմակերպությունները գործուն մասնակցություն են ունենում կատարվող իրավական փոփոխություններին և ազդեցություն են ունենում որոշումների կայացման գործընթացի վրա:

4. Լրացուցիչ հղումներ

- Հայաստանի Հանրապետության օրենքը հասարակական կազմակերպությունների մասին՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:
- Հղում՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=110802
- Հայաստանի Հանրապետության օրենքը հիմնադրամների մասին՝ ընդունված 2002 թվականի դեկտեմբերի 26-ին:
- Հղում՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=1340
- ***Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին*** *կոնվենցիա: Հղում (հայերեն թարգմանությամբ)՝*
- https://unece.org/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf
- *Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական համակարգ*
- https://www.e-draft.am/
- *Հայաստանյան Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջավայրի գնահատման ինդեքս 2023 թվականի հաշվետվություն:*
- *Հղում՝* https://csometer.info/countries/armenia
- *Քաղաքացիական շարժումների հանրագիտարան-Բրիտանիկա, 2023թ. տարբերակ: Հղում՝* https://www.britannica.com/topic/list-of-social-movements-2073658

5.Մեդիա

Մեդիան տեղեկատվությունը հասցնելու ամենաարագ և արդյունավետ միջոցն է: Այն բազմաշերտ և բազմաֆունկցիոնալ է. ձևավորում է երկխոսության դաշտ պետության և հասարակության միջև, արտադրողի և սպառողի միջև, համագործակցում է ՔՀԿների հետ, որոնք հասցեագրում են հանրությանը հուզող խնդիրները և նպաստում սոցիալական փոփոխությունների իրագործմանը:

Մեդիայի կենսագրությունը

Եթե խորանանք ակունքների մեջ, ապա անհիշելի ժամանակներից պահպանված ժայռապատկերներն ու քարի վրա արված արձանագրությունները կարող ենք առաջին «պատի թերթերը» համարել. դրանք պարունակում էին տեղեկություններ, որոնք կարևոր էին այլ մարդկանց, ցեղախմբերի համար: [2]

2 Այդին Մորիկյան, «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու»

Հաղորդակցության ամենահին միջոցներից մեկը փոստային կապն էր: Լատիներեն «posta» բառը ի սկզբանե նշանակել է այն վայրը, որտեղ սուրհանդակները փոխում էին ձիերին: Նամակների և այլ հաղորդագրությունների փոխանակումը իրականացվում էր երկրից երկիր հազարավոր կիլոմետրեր անցնող սուրհանդակների միջոցով:

12-13 դարերում Եվրոպայում զարգանում է առևտուրը, ձևավորվում են հիմնական առևտրային երթուղիները, դրանց խաչմերուկներում գտնվող քաղաքները վերածվում են խոշոր առևտրական և տեղեկատվական կենտրոնների (Համբուրգ, Ֆրանկֆուրտ, Ստրասբուրգ Փարիզ, Լոնդոն, Վենետիկ):

Այս քաղաքներում առևտրականների համար գնացուցակներ և տեղեկատվական թերթիկներ են տպագրվում: Հետագայում դրանցում այլ լուրեր էլ են ավելանում: Լուրեր հավաքելը առանձին զբաղմունք և մասնագիտություն է դառնում: Տեղեկատվական թերթիկները Վենետիկում վաճառվում էին մանրադրամով, որ կոչվում էր՝ gazzetta: Այստեղից էլ ծագում է թերթերի անվանումը՝ գազետան:

20-րդ դարի առաջին կեսին հայտնվում են մեդիայի բոլորովին նոր միջոցներ՝ ռադիոն և հեռուստատեսությունը: Դրանք միանգամից ազդում էին մարդու մի քանի զգայարանների վրա, տեղեկատվությունը դարձնում էին լսելի ու դիտելի: Սկսվում էր անլար հաղորդակցության և հեռարձակող լրատվամիջոցների դարաշրջանը:

Երբ հայտնագործվեց ռադիոկապը, աշխարհը կանգնած էր Առաջին համաշխարհային պատերազմի շեմին: Միաժամանակ մի քանի երկրում աշխատում էին այս ուղղությամբ, քանի որ այն ռազմական նշանակություն ուներ: Ռադիոկապը լայնորեն օգտագործվեց թե՛ Առաջին, թե Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Սակայն այն շատ արագ մտավ նաև կյանքի մյուս ոլորտներ և դարձավ տեխնիկական մեծ առաջընթացի հիմք:

Ռադիոն, որպես լրատվամիջոց, զարգացավ 20-ական թվականներին: Մարդիկ ընդունեցին ռադիոյի մտերմիկ, չպարտադրվող ընկերակցությունը տանը, մեքենայի մեջ. կարելի էր նորություններ լսել և ճանաչել աշխարհը ՝ անգամ առանց գործից կտրվելու: Ռադիոն փոխեց նաև լուրեր ստանալու արագությունը: «Կարդացեք թերթերում՝ վաղը, դիտեք հեռուստատեսությամբ՝ երեկոյան, կամ լսեք ռադիոյով՝ հենց հիմա»,- խոստանում էր գովազդը

Մեդիայի դերն ու նշանակությունը

Ժողովրդավարության զարգացմանը զուգահեռ մեծացել է վերջինիս դերը և նշանակությունը հասարակության կյանքում: Ժամանակակից աշխարհում մեդիայի զարգացումը տեղի է ունենում մի քանի ուղղություններով. տեղեկատվական տեխնոլոգիաների առաջխաղացմամբ ընդլայնվել է մեդիայի տարածման աշխարհագրությունը, վերջինիս լսարանը և դարձրել առավել մատչելի և բազմաբովանդակ: Ընդլայվել են մեդիա դաշտում գործող լրատվամիջոցների տեսակները: Տպագիր մամուլին, հեռուստատեսությանը և ռադիոյին զուգահեռ զարգացել է առցանց մեդիան՝ տեղեկատվական դաշտ բերելով անհատ լրագրողների, բլոգերների, վլոգերների, քաղաքացի լրագրողների և այլն: Այս զարգացումներն էլ իրենց հերթին ստեղծել են ապատեղեկատվության տարածման և մեդիա մանիպուլյացիայի ռիսկեր: Համացանցի և սոցիալական մեդիայի տարածումը խթանել է տեղեկատվական հոսքի ներթափանցումը հասարակություն՝ ստեղծելով լրացուցիչ անհրաժեշտություն վերջինիս կրթելու և տեղեկությունների ստուգման նոր գործիքներ ստեղծելու: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում ևս մեդիան զարգանում է՝ ստեղծելով նոր հնարավորություններ, զուգահեռաբար նաև մարտահրավերներ. համացանցի և սոցիալական մեդիայի զարգացումը հնարավորություն ստեղծեց հակակշռել կողմնակալ և ուղղորդված տեղեկատվությունը այլընտրանքային մեդիա արտադրանքով: Սակայն

այս հնարավորությունները նպաստեցին նաև ապատեղեկատվության և կեղծ լուրերի տարածմանը, ինչին հակազդելու ամենաարդյունավետ միջոցներից են՝

- մեդիագրագիտությունը,
- քննադատական մտածողությունը և
- որակյալ մեդիա արտադրանքը:

Հաղորդակցության տեսակները

Հաղորդակցությունը լինում է միջնորդավորված և չմիջնորդավորված (mediated and unmediated communication): Այս եզրույթի մեջ օգտագործվող մեդիա կամ մեդիում բառը հունարեն նշանակում է միջնորդ: Միջնորդությունը շատ կարևոր, երբեմն նույնիսկ վճռորոշ դեր է խաղում հաղորդակցության գործընթացում:

Որպես հաղորդակցության միջնորդ կարող են հանդես գալ ինֆորմացիայի տարբեր կրիչները և ձևեր: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետը՝ բոլորը միջնորդավորված հաղորդացկության ձևեր են: Իսկ ահա մարդկանց հետ անմիջական հանդիպումները, շփումները, զրույցները ուղղակի չմիջնորդավորված հաղորդակցության տարբերակներ են:

Այսօր մարդն իր փոխհարաբերությունների մեծ մասը միջնորդավորված հաղորդակցության վրա է կառուցում՝ առցանց գնումներ է անում, ծառայություններ պատվիրում, աշխատանքի ընդունվում, կրթություն ստանում և այլն:

Միջնորդավորված հաղորդակցության կարևոր դերակատարներ են լրատվամիջոցները: Տեղեկություններ հաղորդելը նրանց հիմնական աշխատանքն է, սակայն մեդիան երբեք միայն դրանով չի սահմանափակվել. իր սկզբունքներն ու մոտեցումներն է ավելացրել մասսայական հաղորդակցման շղթաներին՝ թեկուզ միայն ընտրելով, թե որ տեղեկություններն են արժանի լուսաբանման:

Այսօր, երբ առանձին մարդիկ կարող են մեդիայից ավելի արագ տեղի ունեցածի մասին պատմել և մի լրատվամիջոցի չափ լսարան հավաքել, լուր հաղորդելը դադարել է լրատվամիջոցի մենաշնորհը լինել:

Մեդիան այսօր

Ռադիոյի և հեռուստատեսության մուտքը մարդկանց առօրյա նույնքան զանգվածային ու սրընթաց եղավ, որքան համացանցինը երկու-երեք տասնամյակ առաջ: Այսօր առանձին մարդիկ կարող են կատարվածի մասին մեդիայից ավելի արագ պատմել սոցիալական ցանցերում և մի լրատվամիջոցի չափ լսարան հավաքել. լուր հաղորդելն այլևս լրատվամիջոցի մենաշնորհը չէ, մարդիկ իրենք են այսօր մեդիա դարձել:

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ) և մեդիա բառերը հիմա էլ հաճախ որպես հոմանիշներ են օգտագործվում: Սակայն համացանցի զարգացմանը զուգընթաց՝ ԶԼՄ մոդելը, երբ մի կենտրոնից կամ աղբյուրից տեղեկությունը հաղորդվում էր լսարանին, դարձել է ժամանակավրեպ: Տեղեկատվական հիմնական հոսքերը տեղափոխվել են վիրտուալ տիրույթ, որտեղ հաղորդակցության հիմքում հորիզոնական կապերն են:

Ոլորտը կարգավորող փաստաթղթեր

Արտահայտվելու (խոսքի) ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, որը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ (42-րդ հոդված) Հայաստանի վավերացրած ու ներքին օրենսդրության մաս դարձած միջազգային փաստաթղթերով՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով («Եվրոպական կոնվենցիա», 10-րդ հոդված) «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» (19-րդ հոդված):

HTML
CSS

ԽԱՂԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ձեռնարկի այս բաժինը նախատեսված է խաղավարների համար: Այստեղ բերված հուշումները հնարավորություն կտան արդյունավետ կերպով կազմակերպել «Մոդել Հայաստան» խաղը, ապահովել մասնակիցների առավելագույն ուսուցողական արդյունքները և խուսափել հնարավոր խնդիրներից:

ԽԱՂԱՎԱՐԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԵՐՊԱՐԸ

Ամեն 20-35 հոգանոց խմբի հետ «Մոդել Հայաստան» խաղի կազմակերպման համար անհրաժեշտ է առնվազն երկու խաղավար: Խաղավարներն ապահովում են խաղի նախապատրաստական աշխատանքները, կազմկոմիտեի հետ համատեղ վարում են հաղորդակցությունը մասնակիցների հետ նախախաղային փուլում, ապա կազմակերպում են բուն խաղը և իրականացնում դրա արդյունքների ամփոփման աշխատանք: Խաղավարները պետք է լինեն մարդիկ, որոնք ունեն երիտասարդների հետ խմբային աշխատանքի վարման փորձ:

Խաղավարները պետք է հանգամանալից կերպով ծանոթանան ներքոնշյալ ցուցումներին և մանրամասն ուսումնասիրեն ամբողջ ձեռնարկը և հատկապես այն խաղի նյութերը, որի կազմակերպման ֆասիլիտացիան պիտի իրականացնեն իրենք:

ԽԱՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մինչև խաղի բուն փուլին անցնելը մասնակիցների հետ իրականացվում են որոշակի նախապատրաստական աշխատանքներ: Այդ աշխատանքները լավագույն դեպքում իրականացվում են խաղի կազմկոմիտեի և խաղավարների համագործակցությամբ, սակայն եթե խաղավարները հասանելի չեն մինչև բուն խաղը, ապա այդ աշխատանքներն իրականացնում է խաղը կազմակերպող կազմակերպությունը:

Մինչև բուն խաղին գալը մասնակիցը անցնում է ընտրության փուլ և ընտրվելու մասին ստանում է համապատասխան նամակ խաղի կազմկոմիտեից: Նամակին կից տրամադրվում են հինգ դերակատարների հետ կապված ուսուցողական նյութերը, հանձնարարությունների հետ կապված խորհուրդները, որոնք մասնակիցները պետք է ուսումնասիրեն մինչև բուն խաղին գալը:

Եթե կա նման հնարավորություն, ցանկալի է մասնակիցների հետ իրականացնել նախապատրաստական վեբինար, որի ընթացքում կներկայացվեն խաղի նպատակը և հետագա քայլերը: Վեբինարի ընթացքում կարող եք նաև դերաբաշխում իրականացնել և տրամադրել դերերի նկարագրությունը՝ մասնակիցներին հնարավորություն տալով առավել շատ ժամանակ ունենալ խաղին խորապես պատրաստվելու համար: Այս վեբինարին կարելի է նաև ստուգել, թե ինչքանով են մասնակիցներն ըմբռնել ուղարկված նյութը:

Բուն խաղից առաջ պետք է կազմակերպվեն բոլոր նախապատրաստական աշխատանքները տարածքի, նյութերի **և** ընդմիջումների պատշաճ առկայության ապահովման համար:

Կարևոր է

Նախապես հստակ կերպով ճշտել խաղի մասնակիցների քանակը և պատրաստել դերերի համապատասխան քանակով թերթիկներ:

Եթե մասնակիցների քանակն ավելի քիչ է, քան առկա դերերը, ապա նույն դերակատարի խմբից պակասեցրեք դերակատարների քանակը: Ուշադիր եղեք, որպեսզի չհանվեն այնպիսի դերեր, որոնք պահանջվում են մյուս դերակատարների համար իրենց աշխատանքների կազմակերպման ժամանակ: Այստեղ կարող եք հանել նախևառաջ այն դերերը, որոնցից մի քանիսն ունեք:

Եթե մասնակիցների քանակն ավելի շատ է, քան խաղի նախապատրաստված դերերը, ապա որոշ դերեր պատճենահանեք և տվեք մի քանի մասնակցի՝ ասելով, որ իրենք պետք է համատեղ աշխատեն:

Հաշվի առեք, որ բուն խաղի օրը կարող են տեղի ունենալ մասնակիցների կազմի և քանակի անսպասելի փոփոխություններ, և Դուք պետք է ունենաք մշակված Պլան Բ՝ մասնակիցների քանակի ավելացման կամ պակասեցման հետ կապված:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
20 - 35 հոգի

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԺԱՄԱՆԱԿ
4 ժամ

Անհրաժեշտ նյութերը

Վատմաններ, գրիչներ, նոթատետրեր, բեյջեր, մարկերներ, գունավոր մատիտներ, գունավոր և սպիտակ թուղթ, տուփ՝ քվեատուփի պատրաստման համար, քվեարկության տպված թերթիկներ՝ ըստ ստորև բերված ձևանմուշի, սոսինձ, քանոն, մկրատ, հին ամսագրեր, դերերի և հանձնարարությունների տպված քարտեր, համակարգիչ՝ մեկ հատ՝ նյութեր փնտրելու և տպելու համար, ինտերնետ կապ, տպիչ:

Անհրաժեշտ տարածքային պայմանները

Մեծ սրահ, որտեղ կարող է հանգիստ տեղավորվել և ազատ տեղաշարժվել 25-30 մասնակից, 3-4 փոքր թիմերի աշխատանքային տարածք՝ կամ առանձին սենյակների տեսքով, կամ մեծ դահլիճ, որտեղ առանց իրար խանգարելու կարող է աշխատել մի քանի խումբ:



	Գործողություն	Նկարագրություն	Տևողություն (րոպե)
Մաս 1	Խաղի բացում, նպատակների և թեմայի ներկայացում	Հրավիրեք մասնակիցներին մեծ դահլիճ, ներկայացրեք խաղի նպատակներն ու անելիքները, օրվա օրակարգը:	15
	Ծանոթացման վարժություն	Մասնակիցներին խնդրեք շրջան կազմել, ասել իրենց անունները և իրենց մասին մեկ հետաքրքիր փաստ նշել:	15
	Խաղի մեկնարկ	Խաղը հայտարարեք պաշտոնապես բացված, ներկայացրեք խաղի ամբողջ ընթացքը, նշեք և.ս մեկ անգամ, թե ինչ փուլերից է այն բաղկացած, և որ փուլում ամեն մասնակից ինչ պիտի անի: Ներկայացրեք իրավիճակը, ընթերցեք նկարագրությունը, հնչեցրեք հանրաքվեի դրվող հարցը: Բաժանեք դերերը մասնակիցներին կամայական ձևով, համոզվեք, որ բոլոր հինգ դերակատարների դերերը բաշխված են, բոլորն ունեն իրենց դերաքարտերը: Եթե խաղի ձեր տարբերակում դերերը բաշխված են եղել նախապես, տպեք դերերը և դրանք տրամադրեք համապատասխան դերակատարներին: Ուշադիր եղեք, որ ամեն դերակատար ստանա հենց իր՝ նախապես ստացած դերի նկարագրությունը: Հարցրեք՝ արդյոք բոլորն ունե՞ն դերեր և հասկանու՞մ են արդյոք այդ դերի էությունը: • Խնդրեք մասնակիցներին նստել և մի քանի րոպե մտածել այդ դերի մասին և փորձել մտնել դերի մեջ: Սա անելու համար խնդրեք նրանց հարմարավետ տեղավորվել, ցանկության դեպքում փակել աչքերը, և տվեք դերերն ավելի լավ պատկերացնելու հետևյալ հարցերը և դրանց մասին խորհելու մի քանի վայրկյան. Որտե՞ղ եք աշխատում, ինչ պաշտոն ունեք, որո՞նք են Ձեր պարտականությունները, Ձեր դերը պետական կառավարման, պետության կայացման և զարգացման մեջ: • Ինչպիսի՞ն է Ձեր օրը, ի՞նչ եք անում, ու՞մ հետ եք շփվում, ի՞նչ բնույթի աշխատանք եք անում: • Ի՞նչ քաղաքական հայացքներ ունեք, ի՞նչ եք կարծում առկա իրավիճակի մասին, ի՞նչ մտահոգություններ ունեք: • Ինչպիսի՞ն է քննարկվող թեմայի մասին Ձեր կարծիքը, ինչու՞ և ինչպե՞ս է այն ձևավորվել: • Ինչպիսի՞ն կուզենաք լինի հանրաքվեի արդյունքը: Այս փուլից հետո, սկսվում է հանձնարարությունների նախապատրաստական աշխատանքը:	15

	Գործողություն	Նկարագրություն	Տևողություն (րոպե)
Մաս 2	Հանձնարարությունների նախապատրաստում	Եթե կարիք կա, մասնակիցներին բացատրեք հանձնարարությունների էությունը, սենյակի մի անկյունում տրամադրեք հանձնարարության համար անհրաժեշտ նյութերն ու միջոցները: Այս անկյունում պետք է լինեն բոլոր նյութերի տպագրված օրինակները, ներառյալ բոլոր նյութերը, որ մասնակիցներին ուղարկվել են նախապես՝ մինչև խաղի սկիզբը: Մի քանի րոպե տվեք մասնակիցներին այդ նյութերը ևս մեկ անգամ ուսումնասիրելու համար: Պատրաստ եղեք պատասխանելու մասնակիցների հարցերին, որոնք տեխնիկական բնույթ ունեն, բայց մի կենտրոնացեք բովանդակային հարցերի վրա, մասնակիցներին հնարավորություն տվեք աշխատելու ինքնուրույն: Ձեզ մոտ ունեցեք բոլոր դերակատարների ու հանձնարարությունների ցանկը և խաղի ընթացքում հետևեք և համոզվեք, որ բոլորը պատկերացնում են իրենց անելիքները, և հուշեք, եթե կա դրա կարիքը: Փորձեք տարբերակել այն մասնակիցներին, որոնք դժվարություններ ունեն, չեն աշխատում, և օգնեք նրանց ինտեգրվելու աշխատանքին:	75
	Հանձնարարությունների արդյունքների ներկայացում	Հանձնարարությունների պատրաստման ժամանակի սպառվելուց հետո բոլոր մասնակիցներին խնդրեք հավաքվել մեծ դահլիճում և հրահանգեք սկսել արդյունքների ներկայացման փուլը: Հաշվի առնելով այն փաստը, որ ներկայացումները կարող են պահանջել միևնույն մասնակիցների կողմից տարբեր խնդիրների լուծում, աշխատեք հետևել, որ իրավիճակը դուրս չգա կառավարումից և շատ խառը չլինի:	45
		Ընդմիջում	20
Մաս 3	Հանրաքվեի նախապատրաստում	Հրավիրեք բոլորին շրջան, հայտարարեք հանրաքվեի անցկացման փուլի սկիզբը: Ներկայացրեք նախապես պատրաստված քվեատուփը և քվեաթերթիկները: Տեղում մասնակիցների հետ որոշեք քվեարկության արդյունքներն ամփոփող հանձնաժողովի կազմը:	15
	Հանրաքվեի իրականացում	Բաժանեք քվեաթերթիկները և ազդարարեք քվեարկության մեկնարկը: Տվեք քվեարկության համար 10 րոպե: Հրավիրեք հանձնաժողովի նիստ և հաշվեք քվեաթերթիկները: Հայտարարեք քվեարկության արդյունքները:	
	Դերերի հետ աշխատանք	Հրավիրեք մասնակիցներին կանգնել շրջանաձև: Խնդրեք մասնակիցներին հերթով ասել իրենց դերը, շնորհակալություն հայտնել, դերի քարտը դնել մեջտեղում դրված պնակի մեջ, հետ գալ շրջան, ասել իր անուն ազգանունը, բնակավայրը, զբաղմունքը: Կարևոր է մասնակիցներին ասել, որ այս պահից իրենք դուրս են գալիս իրենց դերից և քննարկմանը մասնակցում են չեզոք դիրքից: Այս հատվածից հետո նստեք՝ շրջանաձև և սկսեք ամփոփիչ քննարկումը:	5

	Գործողություն	Նկարագրություն	Տևողություն (րոպե)
	Ամփոփիչ քննարկում	Ամփոփիչ քննարկումը բաժանեք երեք մասի՝ հետևյալ հարցադրումներով. Խաղի ընթացքի վերաբերյալ ▶ Ինչպիսին է գործընթացից/խաղից ընդհանուր տպավորությունը: ▶ Ինչպես էր խումբն աշխատում նախապատրաստական հատվածում, ինչպես էր աշխատում խաղի ընթացքում: ▶ Ինչպես էիք պատկերացնում դերերը և նրանց անելիքները: Որտեղից էիք քաղում այդ տեղեկությունները: Խաղի ընթացքում դերի մասին պատկերացումը փոխվեց արդյոք, եթե այո, ապա՝ ինչպես: ▶ Ինչպես էին ընդունվում որոշումները, ընտրվում անելիքները, բաշխվում դերերը: ▶ Ինչպես էր կառուցվում այլ դերակատարների հետ աշխատանքը, ինչպես էին միմյանց հետ շփվում առկա դերակատարները, ինչպես էր այդ շփումն ազդում խաղի ընթացքի և, ի վերջո, արդյունքների վրա: ▶ Ի՞նչն էր օգնում հաղթահարել ի հայտ եկած խնդիրները: ▶ Ինչպես էին ընտրվում աշխատանքի ռազմավարությունն ու տեսակետը առաջ տանելու քայլերը: ▶ Հետադարձ հայացք գցելով՝ ի՞նչ որոշումներ կամ գործողություններ կվերանայեիք Ձեր դերակատարումը բարձրացնելու համար:	45
		Թեմայի վերաբերյալ ▶ Ինչի՞ մասին էր այս խաղն ըստ Ձեզ: ▶ Ի՞նչ կարծիք ունեք տարբեր դերակատարների մասին, ինչպես էին նրանք իրենց դրսևորում, ի՞նչն էր զարմացնում: ▶ Տարբեր դերակատարների հանձնարարությունների հետ կապված ի՞նչ դիտարկումներ ունեք: Ի՞նչ հիմնական գործիքներ էին նրանք կիրառում: ▶ Որքանո՞վ էր այս խաղը արտացոլում իրական կյանքը, ինչպես: ▶ Ինչպես են, ըստ Ձեզ, ժողովրդավարական արժեքները կապված թեմայի հետ:	
	Խաղի փակում և գնահատում	Ամփոփիչ քննարկման վերջում կարճ հարցում արեք՝ գնահատելով խաղը: Խնդրե՛ք մասնակիցներին A5 չափսի թերթիկների վրա գրել իրենց տպավորությունները խաղից, երեք կարևոր միտք, որ տանում են իրենց հետ, և առաջարկներ խաղն իրականացնողներին: Թերթիկները նամակի տեսքով, անանուն կամ ստորագրված, պետք է գցեն հատուկ հատկացված տուփի մեջ:	10

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

(նշվում է քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը)

Համաձայն եք

_____

_____

(նշվում է հանրաքվեի դրված նախագծի (հարցի) անվանումը)

ՆՇՄԱՆ ՀԱՄԱՐ	ՆՇՄԱՆ ՀԱՄԱՐ
Այո ☐	Ոչ ☐

(տպագրված է «ՄոդելՀայաստան» տպագրատանը

ԴԵՐԱՔԱՐՏԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Դերի անվանում
Դերի նկարագրություն
Հանձնարարություն
Արդյունք
Հաղորդակցություն

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ա. Մամլո ասուլիս - Պաշտոնական միջոցառում, որի ընթացքում պատասխանատու անձինք կամ կազմակերպության ներկայացուցիչները խոսում են լրագրողների և հանրության առջև՝ տեղեկացնելով կարևոր հարցերի, երևույթների, նախաձեռնությունների կամ իրադարձությունների մասին: Այստեղ ներկայացվում է նախապես պատրաստված հայտարարություն (հաղորդագրություն), ապա լրագրողներն ունենում են հնարավորություն հարցեր տալու և մանրամասներ իմանալու:

Խորհուրդներ մամլո ասուլիսի համար

1. Նախապես որոշեք ասուլիսի նպատակը և հիմնական թեմաները:
2. Պատրաստեք հայտարարության/հաղորդագրության տեքստը և ձգտեք կանխատեսել հնարավոր հարցերը:
3. Ընտրեք հարմար վայր և ժամանակ՝ մեծ թվով լրագրողներիմասնակցությունն ապահովելու համար:
4. Պատրաստեք տեղեկատվական փաթեթներ լրագրողներին տրամադրելու համար:
5. Նշանակեք մոդերատոր, որը կվարի ասուլիսի ընթացքը:
6. Եղեք հավասարակշռված և անաչառ՝ լսելով բոլոր կարծիքներն ու հարցերը և անուշադրության չմատնելով:
7. Խուսափեք վիճաբանություններից և պահպանեք հանգստություն բարդ և խրթին հարցերի դեպքում:
8. Եզրափակեք ասուլիսն ամփոփիչ նկատառումներով:
9. Ասուլիսից հետո ուղարկեք լրացուցիչ տեղեկություններ, եթե անհրաժեշտ է:
10. Գնահատեք ասուլիսի արդյունավետությունը հետագա բարելավումների համար:

բ. Հարցազրույց - Ֆորմալ կամ ոչ ֆորմալ երկխոսություն երկու կամ ավելի անձանց միջև, որի նպատակն է տեղեկություններ հավաքել և խորքային գիտելիքներ ստանալ որևէ թեմայի, երևույթի կամ անձի մասին: Հարցազրուցավարը տալիս է հարցեր, իսկ հարցվողը մանրամասն պատասխանում է: Հարցերը պետք է լինեն հստակ, բաց, արդյունավետ և օգնեն լուսաբանել թեման տարբեր տեսանկյուններից:

Խորհուրդներ հարցազրույցի համար.

1. Նախապես լավ ուսումնասիրեք թեման և հարցվողի մասին տեղեկությունները:
2. Պատրաստեք բաց և ոչ ուղղորդող հարցեր:
3. Սկսեք հարցազրույցն ընդհանուր հարցերով՝ ստեղծելով կառուցողական մթնոլորտ:
4. Խուսափեք երկար և բարդ հարցերից:
5. Մի վախեցեք լռության պահերից. այս դադարները կարող են խթանել ավելի խոր պատասխանների ձևավորումը:
6. Ըստ անհարժեշտության խնդրեք լրացուցիչ պարզաբանումներ կամ օրինակներ:
7. Ցուցաբերեք հետաքրքրվածություն և հարգանք հարցվողի հանդեպ:

8. Խուսափեք սուբյեկտիվ կարծիքներից կամ դատողություններից:
9. Եզրափակեք հարցազրույցը՝ ամփոփելով հիմնական կետերը:

գ. Հարցուպատասխան - Շփման և փոխազդեցության վրա հիմնված ձևաչափ, երբ խմբի անդամները հարցեր են տալիս և պատասխանում միմյանց գիտելիքներ փոխանակելու և քննարկման միջոցով խնդիրներ լուծելու նպատակով: Այն խթանում է երկխոսության, կարծիքների բազմազանության և հետաքրքիր ու արդյունավետ միջավայրի ստեղծումը:

Խորհուրդներ հարցուպատասխանի համար.

1. Սահմանեք հստակ կանոններ և ժամանակային շրջանակ:
2. Ապահովեք մասնակիցների ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը:
3. Խրախուսեք բաց և անկեղծ մթնոլորտը:
4. Հարգեք բոլորի կարծիքները՝ անկախ Ձեր համաձայնությունից կամ անհամաձայնությունից:
5. Խուսափեք անձնավորված և մասնակիցներին գնահատող մեկնաբանություններից:
6. Ապահովեք հավասար հնարավորություն բոլորի համար՝ հարցեր տալու և պատասխանելու:
7. Եզրափակեք՝ հիմնական հետևությունները և հետաքրքիր/օգտակար մտքերը ամփոփելով:
8. Վերլուծեք հարցուպատասխանի գործընթացը և փորձեք մտածել, թե ինչպես բարելավել հետագա նման գործընթացները:

դ. Ելույթ - Բանավոր ներկայացում լսարանի առջև, որի ընթացքում ելույթ ունեցողը խոսում է որևէ թեմայի կամ գաղափարի մասին: Ելույթն ունի ներածություն, հիմնական մաս և եզրակացություն: Արդյունավետ ելույթի համար անհրաժեշտ է բանավոր խոսքի վարպետություն՝ տեսողական կոնտակտ պահելու ունակություն, ժեստեր, արագություն և ձայնի պատշաճ բարձրություն ու տոնայնություն:

Խորհուրդներ ելույթի համար.

1. Սահմանեք ելույթի նպատակը և հիմնական թեմաները:
2. Բազմակողմանիորեն ուսումնասիրեք թեման և հավաքեք տեղեկություններ տարբեր աղբյուրներից:
3. Պլանավորեք ելույթի կառուցվածքը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն:
4. Պատրաստեք պատկերավոր օրինակներ և համոզիչ փաստարկներ:
5. Կազմեք վիզուալ օժանդակ նյութեր՝ պրեզենտացիա, սլայդներ, տեսանյութ և այլն:
6. Գործադրեք ոճական աջակցող տեխնիկաներ՝ հումոր, փոխաբերություն, պատմություններ և այլն:
7. Պարապեք և կատարելագործեք հռետորական կարողությունները և ելույթ ունենալու տեխնիկան:
8. Սկսեք ազատ ոճով և ստեղծեք դրական կապ լսարանի հետ:
9. Հետևեք ժամանակացույցին և մի՛ շեղվեք թեմայից:

10. Եզրափակեք բովանդակալից և հիշվող ամփոփումով, մեջբերումով կամ կոչով:

ե. Զեկույց - Հետազոտության կամ ուսումնասիրության ձևաչափով խոր ներկայացում որևէ թեմայի կամ հարցի վերաբերյալ: Զեկույցը պարունակում է համապարփակ տեղեկություններ, վերլուծություններ, ապացույցներ, տվյալներ, գրաֆիկներ և եզրակացություններ: Զեկուցողը պետք է լինի պատշաճ պատրաստված և ներկայացնի թեման համոզիչ ու համակարգված կերպով:

Խորհուրդներ զեկույցի համար.

1. Որոշեք զեկույցի նպատակը և ձևաչափը:
2. Հավաքեք տվյալներ և փաստեր՝ օգտվելով սկզբնաղբյուրներից և վստահելի աղբյուրներից:
3. Կառուցեք զեկույցի համար հստակ կառուցվածք և ներառեք համապատասխան բաժիններ՝ ներածություն, մեթոդաբանություն, արդյունքներ և այլն:
4. Օգտագործեք սեղմ և գրագետ գրելաոճ՝ խուսափելով դատարկախոսությունից:
5. Ձետեղեք աղյուսակներ, գծապատկերներ տվյալները վիզուալ տեսանկյունից հստակ ցուցադրելու համար:
6. Ապահովեք տվյալների և աղբյուրների հուսալիությունը:
7. Եզրափակեք համոզիչ և ամբողջական եզրահանգումներով կամ առաջարկություններով:
8. Խմբագրեք և սրբագրեք սխալները նախքան հրապարակումը:

զ. Հոդված - Գրավոր աշխատանք գրական կամ գիտական մամուլի համար, որում հեղինակը ներկայացնում է իր տեսակետը կամ գաղափարները որևէ թեմայի կամ հարցի շուրջ: Հոդվածը կարող է լինել վերլուծական, հետազոտական, գաղափարական և պարունակել փաստեր, վերլուծություն, օրինակներ և մեկնաբանություններ: Այն պետք է գրավի ընթերցողների ուշադրությունը, լինի հետաքրքիր և խթանի նրանց մտածելու տվյալ թեմայի շուրջ:

Խորհուրդներ հոդվածի համար.

1. Ընտրեք հոդվածի թեման և նպատակը՝ ուսուցողական, վերլուծական, ժամանցային և այլն:
2. Գրեք գրավիչ վերնագիր՝ ընթերցողի ուշադրությունը գրավելու համար:
3. Լրացրեք հիմնական գաղափարը համոզիչ փաստարկներով և օրինակներով:
4. Օգտագործեք պարզ և հասկանալի լեզու՝ խուսափելով մասնագիտական ժարգոնից:
5. Բաժանեք տեքստը տրամաբանական պարբերությունների և թեմատիկ բաժինների:
6. Ձետեղեք տեսողական օժանդակ նյութեր՝ լուսանկարներ, տվյալներ, գծապատկերներ և այլն:
7. Փորձեք մնալ անաչառ և զերծ կանխակալ կարծիքներից:
8. Եզրափակեք հոդվածը հստակ եզրակացությամբ կամ կոչով:
9. Խմբագրեք և սրբագրեք սխալները նախքան հրապարակումը:

ԸՇՈՒՄԸԵՐԻ ՀԱՄԱՐ



«Մոդել Հայաստան» կրթական խաղի ձեռնարկը մշակվել է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակություն զարգացման ՀԿ փորձագիտական թիմի կողմից՝ «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի շրջանակներում:
Ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»-ի հետ համատեղ:
Ձեռնարկում ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ որ այն արտահայտի Եվրոպական Միության և ծրագիրն իրականացնող կազմակերպությունների տեսակետները: